

Հավելված
Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 23-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3
2. Ամփոփոգիր.....	5
3. Անկախ հաշվեքննության կարծիք.....	9
4. Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն	11
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ.....	13
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր	22
7. Կատարողականի հաշվեքննության արդյունքներ.....	29
8. Եզրակացություններ.....	37
9. Առաջարկություններ.....	41

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 19-ի թիվ 154 -Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

Հաշվեքննության առարկան Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացը:

- ՀՀ ջրային օրենսգիրք
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք
- «Պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենք
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք

Հաշվեքննության չափանիշները «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենք
ՀՀ կառավարության 23.12.2004 թվականի թիվ 1925-Ն որոշում
Հանձնաժողովի 09.08.2019 թվականի թիվ 299-Ա որոշում
Հանձնաժողովի 04.05.2007 թվականի թիվ 206-Ն որոշում
Հանձնաժողովի 09.06.2010 թվականի թիվ 285-Ն որոշում
Հանձնաժողովի 02. 11. 2015 թվականի թիվ 388-Ն որոշում
Հանձնաժողովի 29. 06. 2016 թվականի թիվ 195-Ա որոշում

Հաշվեքննության ընդգրկող ժամանակաշրջանը 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության կատարման ժամկետը 2021 թվականի հունիսի 22-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը՝ ներառյալ:

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի համապատասխանության և

Հաշվեքննության մեթոդաբանությունը	կատարողականի հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն: Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում, զննում և դիտարկում ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները մինչև 26.01.2022 թվականը համակարգել է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյանը:

II. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան պլանը հաստատվել է 798,863.1 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 813,842.3 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 793,872.21 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 792,512.14 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 793,163.7 հազ. դրամ: 2019 թվականին՝ ճշտված պլանի նկատմամբ, բյուջեն կատարվել է 97.46%-ով:

Հանձնաժողովի 2020 թվականի պետական բյուջեի տարեկան հաշվետվության համաձայն՝ տարեկան պլանը հաստատվել է 842,907.7 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 851,793.69 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 837,930.13 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 830,067.48 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 830,762.99 հազ. դրամ: 2020 թվականի ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 97.5%-ով:

Հանձնաժողովի «1064 Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի պլանով ծախսը նախատեսվել է 798,863.1 հազ. դրամ, ճշտված պլանով՝ 805,046.3 հազ. դրամ (սոցիալական փաթեթների ապահովում՝ 8,796.0 հազ. դրամ), իսկ 2020 թվականի պլանով ծախսը նախատեսվել է 842,907.7 հազ. դրամ իսկ ճշտված պլանով՝ 842,937.69 հազ. դրամ (սոցիալական փաթեթների ապահովում՝ 8,856.0 հազ. դրամ):

2019 թվականին հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով հաշվարկվել է 805.04 մլն դրամի չափով գումար, որը 0.66%-ով կամ 5.4 մլն դրամով զիջել է նախորդ տարվա (810.4 մլն դրամ) ցուցանիշը:

2020 թվականին հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով հաշվարկվել է 842.93 մլն դրամ, որը 4.49%-ով կամ 37.89 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

2019 թվականի համեմատ 2020 թվականի նախատեսված ծախսերը հիմնականում ավելացել են «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 21,688.7 հազ. դրամ և «4112 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով 18,027.43 հազ. դրամ: Ավելացումը իրականացվել է 2019 թվականի սեպտեմբերի 13-ի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի փոփոխության հիման վրա:

Ըստ հանրային ծառայությունների առանձին ոլորտների կարգավորման գործընթացների հաշվեքննությամբ ընդգրկվել են հետևյալ էական փաստերը՝

1. Հանրային ծառայությունները կարգավորվող ոլորտներից հաշվետու ժամանակաշրջանում ջերմամատակարարման համակարգը չի կայացել, որի նպատակների իրականացման և իրացման ծավալների կանխատեսված արդյունքների բացակայությամբ պայմանավորված Հանձնաժողովը գործունեության ընթացքում ի վերջո չի ապահովել կարգավորման գործուն մեխանիզմների ստեղծումը և դրանց արդյունավետ իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հետևաբար չի պահպանվել կատարողականի նպատակային արդյունավետության սկզբունքը:

Հանձնաժողովի կողմից չի պահպանվել նաև կատարողականի ծախսային արդյունավետության սկզբունքը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ջերմամատակարարման համակարգի կայացման, կարգավորման անհրաժեշտ մեխանիզմների ստեղծման և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված ռեսուրսների ծախսման պարագայում ջերմային էներգիայի մատակարարման որևէ համակարգ հանրապետությունում չի գործում:

2. Հանձնաժողովի կողմից կարգավորվող անձանց համար պարտադիր վճարները հաշվարկվել և սահմանվել են սակագների հաշվարկի մեջ օգտագործվող կանխատեսված իրացման շրջանառություններից ելնելով, մինչդեռ որոշ դեպքերում փաստացի իրացման շրջանառությունները էականորեն տարբերվել են կանխատեսված ցուցանիշներից, որի արդյունքում չի ապահովվել Հանձնաժողովի կանոնադրության 2-րդ գլխի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նպատակն, այն է՝ «Կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ»: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից չի պահպանվել նպատակային արդյունավետության (օգտավետության) սկզբունքը:

3. ՀՀ-ում խմելու ջրի սակագնի նվազմանը, կամ սակագնի աճի վրա ազդող գործոնների չեզոքացմանն ուղղված՝ մատակարարման համակարգում մեծածավալ կորուստների վերհանման և փաստացի ջրամատակարարման հաշվառված ծավալների ավելացման աշխատանքների շրջանակում Հանձնաժողովը բավարար չի իրականացրել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը հավասարակշռելու և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խթանելու նպատակներն, ինչպես նաև չի ապահովել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում կարգավորման համապատասխան մեխանիզմներ ստեղծելու և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու խնդիրները: Արդյունքում, Հանձնաժողովի կողմից կատարողականի նպատակային արդյունավետության (օգտավետության) սկզբունքը պահպանվել է թերի՝ տարեկան բացահայտվում է 1-2

մլն խմ չհաշվառված, բայց փաստացի մատակարարվող խմելու ջուր, ուստի 400 մլն խմ կորուստը այս տեմպերով հնարավոր կլինի հաշվառել 200 տարվա ընթացքում:

4. Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի սահմանված նպատակներում սպառողների շահերը ենթադրում են նաև շրջակա միջավայրի վերաբերյալ խնդիրների կարգավորումները, որ Հանձնաժողովին ամրագրված են ջրային ոլորտում ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները և դրանց հաշվարկման (մշակման) մեթոդիկաները սահմանելու լիազորությունները, Հանձնաժողովի հաստատած լիցենզիայի պայմաններով ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սահմանված սակագինն ուղղակիորեն կախված է ջրամատակարարման սակագնից և կապված չէ կեղտաջրերի հեռացման ծավալի ու մաքրման աշխատանքների հետ, հետևաբար Հանձնաժողովի կողմից չի պահպանվել նպատակային արդյունավետության (օգտավետության) սկզբունքը՝ ստեղծած գործիքակազմը չի նպաստում նպատակների կենսագործմանը:

5. Հանձնաժողովի կողմից չի ապահովվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի թ) կետի պահանջի կատարումը՝ համաձայն որի Հանձնաժողովը իրավասու մարմնին առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ:

6. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի ժբ) կետով Հանձնաժողովի համար սահմանվել է, որ «...սույն օրենքի դրույթները կամ լիցենզիայի կամ թույլտվության պայմանները կամ Կարգավորողի ընդունած իրավական ակտերը (ներառյալ՝ կանոնները և կանոնակարգերը) խախտելու համար կիրառել պատժամիջոցներ, այդ թվում՝ տույժեր և տուգանքներ, իսկ համապատասխան դեպքերում՝ լիցենզիայի կամ թույլտվության փոփոխում, կասեցում կամ դատարան ներկայացնել դադարեցման դիմում: Կարգավորողը պարտավոր է հանրային խորհրդակցությունից հետո հաստատել կանոններ և կարգեր՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ»: Հանձնաժողովի կողմից տվյալ պահանջի կատարումը չի ապահովվել:

7. Ջրամատակարարման կամ ջրահեռացման ծառայությունների մատուցման համար լիցենզիայի տրամադրման մասով արձանագրվել են հակասություններ ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 121-րդ հոդվածի 8-րդ մասի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 8.1 կետի (Ջրային ոլորտ) պահանջների միջև: Ըստ ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ գլխի (գլուխը խմբ.23.06.2015 ՀՕ-108-Ն) 38-րդ հոդվածի 1-ին մասի՝ ջրամատակարարման կամ ջրահեռացման ծառայությունները մատուցվում են Հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի հիման վրա: Նույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվել է, որ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը

ոռոգման ջրամատակարարման ծառայությունները կարգավորվում են միայն սակագների մասով և Հանձնաժողովի կողմից ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման համար լիցենզիա չի տրամադրվում, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից ոռոգման ջրամատակարարման ծառայությունները մատուցվում է Հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի հիման վրա: Սակայն «Զրառ» ՓԲԸ-ն լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով չի դիմել, քանի որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում (Գլուխ VII, հոդված 43, 8.1 Զրային ոլորտ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցումը չի ներառվել:

8. Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից չեն պահպանվել իր կանոնադրությամբ սահմանված առանձին պահանջներ: Մասնավորապես, չի ապահովվել Հանձնաժողովի կանոնադրության 3-րդ գլխի 11-րդ կետի 4 դ) ենթակետի պահանջի կատարումը՝ ըստ որի Հանձնաժողովը պետք է «սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով իրականացնել ստուգումներ և աուդիտ՝ օրենսդրության, Կարգավորողի կողմից ընդունված իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով», ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման գործընթացում՝ 3-րդ գլխի 4) կետի ե. ենթակետի պահանջն՝ ըստ որի Հանձնաժողովն «...ապահովում է արդար և արդյունավետ մրցակցություն մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում» պահանջը, 11-րդ կետի 1) գ. ենթակետի պահանջն՝ ըստ որի Հանձնաժողովն «իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնում է լիցենզավորում՝ տրամադրում է լիցենզիաներ, երկարաձգում է դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպում, կասեցնում և դադարեցնում դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանում լիցենզիաների պայմանները, վերահսկում դրանց կատարումը և կիրառում «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուժանքները» և այլն:

III. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել Հանձնաժողովի կողմից 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 դեկտեմբերի 31-ը հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացի արդյունավետությունն ու համապատասխանությունն իրավական ակտերին:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք Հանձնաժողովի կողմից իրականացվող՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացի արդյունավետության և իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, համապատասխանության հաշվեքննության ձեռնարկի համաձայն: Մենք հետևեցինք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորեցինք և իրականացրեցինք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ հաշվեքննության օբյեկտի կողմից իրականացվող՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ անհամապատասխանության հետևանքով Հանձնաժողովի կողմից իրականացվող՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացում էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Հանձնաժողովի կողմից իրականացված՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացում առկա են անհամապատասխանություններ ՀՀ օրենսդրության պահանջների, ինչպես նաև կարգավորման համապատասխան մեխանիզմների ստեղծման և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման գործում իր կանոնադրությամբ ամրագրված լիազորությունների հետ (նայել անհամապատասխանությունների վերաբերյալ V գլուխը):

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, 2019-2020 թվականների ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվող՝ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացը, բոլոր էական առումներով, համապատասխանում է իրավական ակտերին, ինչպես նաև իր կանոնադրությամբ ամրագրված լիազորություններին:

IV. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Հանրային ծառայությունները կարգավորվող ոլորտներից հաշվետու ժամանակաշրջանում ջերմամատակարարման համակարգը չի կայացել, որի նպատակների իրականացման և իրացման ծավալների կանխատեսված արդյունքների բացակայությամբ պայմանավորված Հանձնաժողովը գործունեության ընթացքում ի վերջո չի ապահովել կարգավորման գործուն մեխանիզմների ստեղծումը և դրանց արդյունավետ իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հետևաբար չի պահպանվել կատարողականի նպատակային արդյունավետության սկզբունքը:

Հանձնաժողովի կողմից չի պահպանվել նաև կատարողականի ծախսային արդյունավետության սկզբունքը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ջերմամատակարարման համակարգի կայացման, կարգավորման անհրաժեշտ մեխանիզմների ստեղծման և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված ռեսուրսների ծախսման պարագայում ջերմային էներգիայի մատակարարման որևէ համակարգ հանրապետությունում չի գործում:

2. Կարգավորվող անձանց համար Հանձնաժողովը պարտադիր վճարները հաշվարկվել և սահմանվել է սակագների հաշվարկի մեջ օգտագործվող կանխատեսված իրացման շրջանառություններից ելնելով, մինչդեռ որոշ դեպքերում փաստացի իրացման շրջանառությունները էականորեն տարբերվել են կանխատեսված ցուցանիշներից, որի արդյունքում չի ապահովվել Հանձնաժողովի կանոնադրության 2-րդ գլխի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նպատակն, այն է՝ «Կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ»: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից չի պահպանվել նպատակային արդյունավետության (օգտավետության) սկզբունքը:

3. ՀՀ-ում խմելու ջրի սակագնի նվազմանը, կամ սակագնի աճի վրա ազդող գործոնների չեզոքացմանն ուղղված՝ մատակարարման համակարգում մեծածավալ կորուստների վերհանման և փաստացի ջրամատակարարման հաշվառված ծավալների ավելացման աշխատանքների շրջանակում Հանձնաժողովը բավարար չի իրականացրել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը հավասարակշռելու և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խթանելու նպատակներն, ինչպես նաև չի ապահովել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում կարգավորման համապատասխան մեխանիզմներ ստեղծելու և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու խնդիրները: Արդյունքում, Հանձնաժողովի կողմից կատարողականի նպատակային արդյունավետության

(օգտավետության) սկզբունքը պահպանվել է թերի՝ տարեկան բացահայտվում է 1-2 մլն խմ չհաշվառված, բայց փաստացի մատակարարվող խմելու ջուր, ուստի 400 մլն խմ կորուստը այս տեմպերով հնարավոր կլինի հաշվառել 200 տարվա ընթացքում:

4. Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի սահմանված նպատակներում սպառողների շահերը ենթադրում են նաև շրջակա միջավայրի վերաբերյալ խնդիրների կարգավորումները, որ Հանձնաժողովին ամրագրված են ջրային ոլորտում ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները և դրանց հաշվարկման (մշակման) մեթոդիկաները սահմանելու լիազորությունները, Հանձնաժողովի հաստատած լիցենզիայի պայմաններով ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սահմանված սակագինն ուղղակիորեն կախված է ջրամատակարարման սակագնից և կապված չէ կեղտաջրերի հեռացման ծավալի ու մաքրման աշխատանքների հետ, հետևաբար Հանձնաժողովի կողմից չի պահպանվել նպատակային արդյունավետության (օգտավետության) սկզբունքը՝ ստեղծած գործիքակազմը չի նպաստում նպատակների կենսագործմանը:

Աբրամ Բախչագույան՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

04 փետրվարի, 2022 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան:

Վ. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջի հետ՝ ըստ որի «Հ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձանցից լիցենզավորող մարմիններն իրավունք ունեն պահանջել լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություններ կամ տեղեկություններ: Իրականում, 2019-2020 թվականներին առանձին դեպքերում լիցենզավորված անձանց կողմից ներկայացված հաշվետվություններում բացակայում են եռամսյակային հաշվետվությունները:

Հաշվեքննվողի պարզաբանումները. ԱՁ «Կ. Ա.»-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիան տրամադրվել է 17.04.2019 թվականին: 2019 թվականի համար ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ վերջինս գործունեություն չի իրականացրել, իսկ 2020 թվականի 1-4-րդ եռամսյակի համար հաշվետվություններ չներկայացնելը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով և վերջինիս կողմից պատերազմի առաջնագծում գտնվելու հանգամանքով, որի վերաբերյալ ԱՁ «Կ. Ա.»-ն տեղեկացրել է աշխատանքային կարգով: Ընդ որում, նշված գործոններով պայմանավորված՝ տվյալ ժամանակահատվածում վերջինս նույնպես գործունեություն չի իրականացրել, և 2021 թվականի համար արդեն իսկ ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ սկսել է մատուցել ծառայություններ 2021 թվականի 3-րդ եռամսյակից:

Հաշվեքննողի մեկնաբանությունը. Գործող օրենսդրությամբ և Հանձնաժողովի կանոնադրությամբ այլ բան չի նախատեսվել:

2. Առկա է անհամապատասխանություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի թ) կետի (որը համապատասխանում է Հանձնաժողովի կանոնադրության III գլխի 11-րդ կետի 4 թ) ենթակետին) պահանջի հետ՝ համաձայն որի Հանձնաժողովն իրավասու մարմինն առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ, որի կատարումը չի ապահովվել:

Հաշվեքննվողի առարկությունները «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով հեռահաղորդակցության բնագավառի կարգավորմանը վերաբերող Հանձնաժողովի գործառույթները, որպես «ex ante» (նախքան փաստերի տեղի ունենալը) կարգավորում իրականացնող մարմին՝ կարգավորման առանձնահատկությամբ պայմանավորված Հանձնաժողովն իրականացնում է ըստ անհրաժեշտության՝ վերլուծելով հեռահաղորդակցության ոլորտի ընթացիկ իրավիճակն ու գնահատելով զարգացման միտումները: Ուստի, այդ համարեքստում,

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահված գործառույթներն՝ ըստ իրենց բնույթի իրականացվում են ինչպես մեկանգամյա սկզբունքով, այնպես էլ պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության: Այդուհանդերձ, պետք է նշել, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետով Հանձնաժողովին վերապահված գործառույթի իրականացումը բխում է նույն օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ կետով իրավասու մարմին վերապահված գործառույթից (խորհրդակցելով Կարգավորողի հետ՝ մշակել ստանդարտներ (ներառյալ՝ ռադիոհաճախականությունների փարածումները և ցանցային համարեղելիությունը)...): Այսինքն, Հանձնաժողովն իրավասու մարմինն առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ վերջինիս կողմից համապատասխան ստանդարտներ մշակելու գործընթացի ընթացքում կամ այդ ստանդարտներն իրավասու մարմնի կողմից սահմանելուց հետո՝ դրանից բխող կարգավորումների սահմանման անհրաժեշտությունից: Ընդ որում, ռադիոհաճախականությունների փարածումներին և ցանցային համարեղելիությանը վերաբերող ստանդարտներն արդեն իսկ սահմանված են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1925-Ն որոշմամբ և այդ մասով լրացուցիչ ստանդարտներ սահմանելու կամ համապատասխան առաջարկ ներկայացնելու անհրաժեշտություն չկա: Այդուհանդերձ, Հանձնաժողովին վերապահված նշված գործառույթի շրջանակում Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 18-ի թիվ 30-Ն որոշմամբ հաստատվել են Հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի և տեխնիկական նկարագրում ընդգրկվող տեղեկությունների ցանկերը, որոնցով սահմանվում են նաև վերոնշյալ տեխնիկական նախագծերում և նկարագրերում ընդգրկվող փաստաթղթերում ներառվող տեխնիկական բնութագրերի և տեղեկությունների պահանջները: Ընդ որում, նշված իրավական կարգավորման նպատակներից է, աջակցել իրավասու մարմնին վերջինիս կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով վերապահված գործառույթների իրականացման հարցում: Բացի այդ, Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 7-ի թիվ 234-Ն որոշմամբ սահմանվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ինտերնետ հասանելիության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց ներկայացվող պահանջները, որի նպատակն է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց համար սահմանել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցելու ընթացքում պաշտպանված ինտերնետ կապ ապահովելու պահանջներ (այդ թվում՝ անվտանգային տեխնիկական պահանջներ՝ «ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում» (ԴՈՍ/ԴԴՈՍ (DOS/DDOS) հարձակումներից պաշտպանված ինտերնետ

կապ): Ընդ որում, որոշմամբ սահմանված է, որ նշված պահանջի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովի կողմից հավաքագրվում է և փոխօգնության կարգով տրամադրվում է իրավասու մարմնին: Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 578Ն որոշմամբ սահմանվել են ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ-ի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի օպերատորների կողմից ազդարարման և իրազեկման պահանջներն ու դրանց իրականացման սկզբունքները, որոնք ներառում են նաև տեխնիկական պահանջներ: Միաժամանակ, Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 354-Ն որոշմամբ սահմանվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերով բացառապես պատվիրված կարճ հաղորդագրությունների ուղարկման ապահովմանն ուղղված պահանջները, որի նպատակն է աջակցել իրավասու մարմնին վերջինիս կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով վերապահված գործառույթների իրականացման հարցում և որոշմամբ սահմանված պահանջները ներառում են նաև տեղեկատվության անվտանգության ISO/IEC27001 միջազգային ստանդարտի հավաստագրի առկայության վերաբերյալ պահանջ: Ամփոփելով, նշենք, որ վերը թվարկված կարգավորումներն ու համապատասխան իրավական ակտերը ներառում են էլեկտրոնային հաղորդակցության համապատասխան տեխնիկական պահանջներ (ստանդարտներ), որոնք նախապես քննարկվել են ոլորտի իրավասու մարմնի հետ, ուստի փաստում ենք, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետով Հանձնաժողովին վերապահված գործառույթն իրականացվում է պատշաճ, նպատակային և ըստ անհրաժեշտության:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Նախ, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով հեռահաղորդակցության բնագավառի կարգավորմանը վերաբերող Հանձնաժողովի գործառույթներում ամրագրված չէ «ex ante» (նախքան փաստերի տեղի ունենալը) կարգավորման սկզբունքը, այլ հստակորեն սահմանվել է տվյալ գործառույթի կատարման պահանջը: Ինչ վերաբերում է Հանձնաժողովի կողմից ընդունված տեխնիկական ստանդարտներին և այլ կարգավորումներին, ապա վերոնշյալ օրենքով պահանջ է առաջադրվել ոչ թե մշակված տեխնիկական ստանդարտներն ընդունելու, այլ իրավասու մարմնին դրանք առաջարկելու վերաբերյալ: Ուստի, Հանձնաժողովի կողմից ներկայացված առարկությունները չեն ընդունվել:

3. Առկա է անհամապատասխանություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի ժբ) կետի (որը համապատասխանում է Հանձնաժողովի կանոնադրության III գլխի 11-րդ կետի 4 ժբ) ենթակետին)

պահանջների հետ՝ ըստ որի «սույն օրենքի դրույթները կամ լիցենզիայի կամ թույլտվության պայմանները կամ Կարգավորողի ընդունած իրավական ակտերը (ներառյալ՝ կանոնները և կանոնակարգերը) խախտելու համար կիրառել պատժամիջոցներ, այդ թվում՝ տույժեր և տուգանքներ, իսկ համապատասխան դեպքերում՝ լիցենզիայի կամ թույլտվության փոփոխում, կասեցում կամ դատարան ներկայացնել դադարեցման դիմում: Կարգավորողը պարտավոր է հանրային խորհրդակցությունից հետո հաստատել կանոններ և կարգեր՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից տվյալ պահանջի կատարումը չի ապահովվել:

Հաշվեքննվողի առարկությունը՝

Հանձնաժողովի կողմից օրենքի նախկին խմբագրությամբ սահմանված՝ պարտամիջոցների կիրառման վերաբերյալ կանոնի (կարգի) հաստատման մասին հիշյալ դրույթը (կանոնի (կարգի) հաստատումն) իրավական առումով խնդրահարույց էր, ինչից ելնելով, չնայած ֆորմալ առումով՝ Հանձնաժողովի իրավասության առկայությանը, վերջինս ձեռնպահ է մնացել դրա հաստատումից: Նման մոտեցման հիմք են հանդիսացել գործող մի շարք իրավակարգավորումներ. մասնավորապես, Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, իսկ 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Մեջբերված դրույթներից հետևում է, որ բացառապես օրենքներով են սահմանվում անձանց իրավունքների սահմանափակումների, այդ թվում նաև՝ պարասխանաբարության կիրառման հարցերը (խնդրո համալրեքստում օրենսդրի նույնական մոտեցումը սահմանված է Սահմանադրության՝ նախկինում գործող խմբագրությամբ): Նշվածից ելնելով, այն է՝ սահմանադրական տեսանկյունից խնդրահարույց համարելով պարտամիջոցների կիրառման վերաբերյալ հարցերի մանրամասնումը հանձնաժողովի որոշմամբ՝ վերջինս ձեռնպահ է մնացել դրա ընդունումից, այնուհետև՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխությունների գործընթաց և հիշատակված հոդվածի՝ պարտամիջոցների կիրառման վերաբերյալ կանոնների (կարգերի) հաստատման վերաբերյալ դրույթն օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանվել է օրենքից: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հանձնաժողովը պարտամիջոցների կիրառման ընթացակարգային հարցերով մշտապես առաջնորդվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված իրավակարգավորումներով, որի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի

Հանրապետության միջազգային պայմանագրերով: Հեղուկաբար, ղեկավարվելով Սահմանադրության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներով և ձեռնպահ մնալով կանոնի (կարգի) ընդունումից՝ Հանձնաժողովն առաջնորդվել է օրենքի իրավակարգավորումներով և որևէ իրավական բաց առկա չի եղել: Միաժամանակ, նախաձեռնելով օրենսդրական փոփոխությունների գործընթաց՝ ՀՕ-368-Ն օրենքով խնդրո առարկա դրույթը հանվել է օրենքից:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Հանձնաժողովի կողմից ներկայացված առարկայամբ մեկ անգամ ևս հաստատվել է հաշվեքննությամբ արձանագրված՝ պատժամիջոցների կիրառման կանոններ և կարգեր չհաստատելու վերաբերյալ փաստը, քանի որ Հանձնաժողովի կողմից ներկայացված օրենսդրական փոփոխություններն այդ գործառույթների մասով ընդունվել են 2021 թվականի դեկտեմբեր ամսին և չեն վերաբերում հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածին, ուստի Հանձնաժողովի առարկությունները չեն ընդունվել:

4. Առկա է անհամապատասխանություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետի (որը համապատասխանում է Հանձնաժողովի կանոնադրության III գլխի 11-րդ կետի 4 դ) ենթակետին) պահանջի հետ՝ որով Հանձնաժողովը «սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով իրականացնել ստուգումներ և աուդիտ՝ օրենսդրության, Կարգավորողի կողմից ընդունված իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով», որը չի կատարվել: Փոխարենը, Հանձնաժողովի կողմից 2019 թվականի օգոստոսի 9-ին ընդունվել է թիվ 299-Ա որոշումը՝ օպերատորների կողմից իր հետ նախապես համաձայնեցված անկախ աուդիտորական կազմակերպության միջոցով նրանց պատկանող հանրային շարժական կապի ցանցերի SS7 համակարգերի՝ ըստ խոցելիության տեսակների, հուսալիության և պաշտպանվածության ապահովման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, որով չի պահպանվել սահմանված պահանջը:

Հաշվեքննվողի պարզաբանումները. ՀՀ ԱԺ կողմից ընդունվել և 2021 թվականի դեկտեմբերի 1-ին ուժի մեջ է մտել Հանձնաժողովի մշակած՝ կարգավորող մարմնի անկախության, կարգավորման գործընթացների արդյունավետության և թափանցիկության բարձրացմանն ուղղված օրենսդրական փաթեթը (որի վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատը տեղեկացվել էր Հանձնաժողովի 27.07.2021թ. ՈԳԲ/34.3-Մ2-3/2522-2021 գրությամբ), որի համաձայն՝ կարգավորման գործընթացների պահանջներից բխող նպատակային այն ծախսերը, որոնք նշված օրենքների ընդունումից առաջ գործող իրավակարգավորումներով Հանձնաժողովի սահմանած պահանջներով իրականացնում էին լիցենզավորված անձինք (օրինակ, տեխնիկական աուդիտ)՝ հնարավորություն կունենա այսուհետ իրականացնելու Հանձնաժողովը:

5. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 121-րդ հոդվածի 8-րդ կետի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 8.1 կետի (Ջրային ոլորտ) պահանջների միջև: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի՝ ջրամատակարարման կամ ջրահեռացման ծառայությունները մատուցվում են Հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի հիման վրա, իսկ 121-րդ հոդվածի 8-րդ կետի՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ոռոգման ջրամատակարարման ծառայությունները կարգավորվում են միայն սակագների մասով և Հանձնաժողովի կողմից ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման համար լիցենզիա չի տրամադրվում, իսկ սկսած 2020 թվականի հունվարի 1-ից ոռոգման ջրամատակարարման ծառայությունները մատուցվում է Հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի հիման վրա:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ջրային ոլորտում գործունեություն իրականացնող ջրամատակարար կազմակերպություններից լիցենզիա ունեցել է միայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, իսկ ոչ մրցակցային ոռոգման ջրամատակարարման ծառայություններ մատուցող «Ջրառ» ՓԲԸ-ն 2020 թվականի հունվարի 1-ից գործունեությունն իրականացրել է առանց լիցենզիայի: Միաժամանակ, ՀՀ ջրային օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզիա չի պահանջվում և մատուցվող ծառայությունների սակագները չեն կարգավորվում, եթե լիցենզավորման ենթակա գործառույթներն իրականացվում են երկու դեպքում՝ բացառապես սեփական կարիքների համար և համայնքների կամ ջրօգտագործողների ընկերությունների կամ ջրօգտագործողների ընկերությունների միությունների կամ համայնքային բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, որոնց թվին «Ջրառ» ՓԲԸ-ն չի պատկանել: Հետևաբար՝ սկսած 2020 թվականի հունվարի 1-ից, տվյալ ընկերության գործունեությունը չի համապատասխանել ՀՀ ջրային օրենսգրքի 38-րդ հոդվածի պահանջին, քանի որ փաստացի իրականացնելով գործունեություն, չի դիմել Հանձնաժողովին լիցենզիա ստանալու համար, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխի 43-րդ հոդվածի 8.1 կետում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում չի ներառվել ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցումը՝ հանգեցնելով նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև հակասության առաջացմանը:

Հաշվեքննվողի առարկությունները՝

Նախևառաջ հարկ է նշել, որ ՀՀ-ում գործունեության տարբեր ոլորտներում առաջացող լիցենզավորման հարաբերություններն ամբողջացնող ու համապարփակ կարգավորող նորմատիվ իրավական ակտը «Լիցենզավորման մասին» օրենքն է:

Նշված օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի աղյուսակում:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 8.1. «Ջրային ոլորտ» բաժնում նախատեսվում է միայն խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցումը, իսկ որպես լիցենզավորող մարմին նշված է Հանձնաժողովը. ընդհանրապես չկա որևէ նշում ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման մասով: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, որը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը, 7.1 «Ջրային բնագավառ» բաժնում պետական տուրքի դրույքաչափ է նախատեսվում միայն խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար, ու կրկին ոռոգման ջրի մատակարարման համար պետական տուրքի դրույքաչափ նախատեսված չէ: Ընդ որում, «Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ ու 3-րդ հոդվածներից բխում է, որ պետական տուրքը սահմանված է միայն այն ծառայությունների կամ գործողությունների համար, որոնք սահմանված են հենց այդ օրենքով, ինչից հետևում է, որ այլ օրենքներով սահմանված ծառայությունները պետական տուրքի գանձման օբյեկտ չեն, եթե չեն արտացոլվում «Պետական տուրքի մասին» օրենքով: Այլ կերպ, ստացվում է, որ նույնիսկ եթե տվյալ դեպքում ոռոգման ջրամատակարարման ծառայությունը համարվի լիցենզավորման ենթակա ծառայություն, ապա դրա դիմաց չի կարող գանձվել պետական տուրքի գումար, ինչը պարզապես խախտում է պետական տուրքի ինստիտուտի նախատեսման տրամաբանությունն ու նպատակները:

Ինչ վերաբերում է Արձանագրության մեջ կատարված դիտողությանն առ այն, որ ներկայացվող իրավիճակում Հանձնաժողովը հայտի դեպքում կարող է տվյալ պարագայում կիրառել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված՝ իրավական կոլիզիայի լուծման կանոնը և արդյունքում հիմք ընդունել ՀՀ ջրային օրենսգրքի համապատասխան կարգավորումը, ապա նախ անհրաժեշտ է փաստել, որ ո՛չ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի իմաստով, ո՛չ նույն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի իմաստով, օրենսգիրքը չի համարվում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ, քան օրենքը, բացառությամբ այն օրենսգրքերի, որոնք, ՀՀ սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, ունեն սահմանադրական օրենքի կարգավիճակ: Ընդ որում, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածն «օրենսգիրք» հասկացության ներքո ընդամենը նկատի է ունենում այն օրենքը, որը միավորում է իրավունքի

ամբողջ ճյուղի կամ դրա առանձին մասի՝ համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր կամ հիմնական նորմերը:

Տվյալ դեպքում ՀՀ ջրային օրենսգրքը չունի սահմանադրական օրենքի կարգավիճակ, հետևաբար «Լիցենզավորման մասին» օրենքի նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժ ունենալու մասով Արձանագրության մեջ ընդունված կանխադրույթը հիմնավոր չէ:

Հարկ է նաև փաստել, որ ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումը նախատեսված է ոչ թե ՀՀ ջրային օրենսգրքի՝ որպես նորմատիվ իրավական ակտի հիմնական մասում, այլ անցումային դրույթները նախատեսող հոդվածում: Նշված նորմը նախատեսվել է «Հայաստանի հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-108-Ն օրենքի 27-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 22-ին):

Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի (ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին) 13-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսվում են նորմատիվ ակտի անցումային դրույթների բովանդակությանը ներկայացվող պահանջները: Անցումային դրույթներին ներկայացվող պահանջներ է պարունակում նաև մինչև 2018 թվականի ապրիլի 7-ը գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը:

Նշված կարգավորումների բովանդակության համարեքստում ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասի՝ 2020 թվականի հունվարի 1-ից հետո ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման լիցենզավորման առանձնահատկությունների մասով նախատեսված կարգավորումը դիտարկելու պարագայում կարող ենք եզրահանգել, որ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետք է լիարժեք հիմքեր ստեղծվեին ոռոգման ոլորտում լիցենզավորման գործունեությունը լիարժեք իրականացնելու համար, մինչդեռ, ինչպես նշվեց, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների և պետական տուրքի մասով չեն նախատեսվել համապատասխան իրավական հիմքեր:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի համոզմամբ, 2020 թվականի հունվարի 1-ից սկսած նշված անցումային դրույթի կիրառումը՝ որպես ոռոգման ջրամատակարարման ոլորտում լիցենզավորման հատուկ կարգավորում, խնդրահարույց է ոչ միայն անցումային դրույթի նախատեսման նպատակի համարեքստում, այլև նշված նորմն ընդհանրապես որպես հատուկ կարգավորող նորմ դիտարկելու առումով: Հանձնաժողովը գտնում է, որ 2020 թվականի հունվարի 1-ից հետո պետք է ՀՀ ջրային օրենսգրքի հիմնական մասում նվազագույնը նախատեսվեր հստակ նորմ առ այն, որ ոռոգման ջրամատակարարման ոլորտում Հանձնաժողովը՝ որպես կարգավորող, հանդես է գալիս որպես լիցենզավորող պետական մարմին, մինչդեռ տվյալ դեպքում նշված օրենսգրքի հատուկ մասում նման դրույթ չկա: Հետևում է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա

«Լիցենզավորման մասին» օրենքը, որը, ինչպես ընդգծվեց, ընդհանրապես չի նախատեսում ոռոգման ջրամատակարարումը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

Ի հավելումն վերը շարադրվածի՝ նշենք, որ Հանձնաժողովը նշված խնդիրը բազմիցս բարձրացրել է նաև իրավասու մարմիններին ուղղված գրություններով՝ առաջարկելով օրենսդրական նախաձեռնության շրջանակում համապատասխան փոփոխությունների միջոցով լուծել կարգավորման անհստակությունները:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Ըստ էության, «Զրառ» ՓԲԸ-ի լիցենզավորման մասով Հանձնաժողովի առարկություններում ու բացատրություններում բերված մոտեցումները համահունչ են Արձանագրությունում շարադրված՝ օրենսդրական դաշտում հակասությունների ու անհստակության խնդրի առկայության մասին ձևակերպմանը: Խնդրի լուծումը երկուստեք համարվել է հնարավոր օրենսդրական դաշտի ներդաշնակեցման միջոցով, որի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից նշվել է, որ նրա կողմից հարցը «բազմիցս բարձրացրել է նաև իրավասու մարմիններին ուղղված գրություններով»:

VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. Հաշվեքննությանը ընդգրկված «1064-11001 Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում» միջոցառման «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» 2019-2020 թվականների հաշվետվություններում բյուջեի կատարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բավարար չափով չի ապահովվել՝ հաշվետվություններում ոչ բոլոր արդյունքի չափորոշիչներն են ներկայացվել ըստ ոլորտների, ինչպես նաև բացակայում են ժամկետային, որակական և այլ ցուցանիշները (արտացոլվել են միայն քանակական ցուցանիշները):

2. Հաշվեքննության շրջանակներում ընտրանքային կարգով պարտադիր վճարների հաշվարկման և պետական բյուջե փոխանցման հարցի շուրջ իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ռադիոհաճախականության օգտագործման ոլորտում գործող ամենախոշոր օպերատորներից «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի մոտ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց 2020 թվականին առաջացել է պետական բյուջեի նկատմամբ 61,453.31 հազ. դրամի չափով տույժի չմարված պարտավորություն, որը ենթակա է վճարման պետական բյուջե:

3. Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրումը մրցույթների կամ աճուրդի միջոցով Հանձնաժողովի կողմից իրականացվել է 2019 թվականին՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 811-821ՄՀց և 852-862ՄՀց, 1765-1785ՄՀց և 1860-1880ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների մասով՝ 2018 թվականին Հանձնաժողովին դիմելուց հետո: Այդ նպատակով Հանձնաժողովի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված տեղեկանք-հիմնավորման մեջ նշվել է, մասնավորապես, «... հաշվի առնելով ՀՀ հանրային շարժական կապի ծառայությունների փոքր շուկայի ներկայիս հագեցած և բարձր մրցակցային իրավիճակը, հանձնաժողովը թե ներկայում, և թե ապագայում նպատակահարմար չի համարում 4-րդ օպերատորի մուտքը հանրային շարժական կապի ծառայությունների շուկա»: Արդյունքում, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից առաջարկված՝ 800ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները Հանձնաժողովի կողմից մինչև մրցութային գործընթացների իրականացումը հաստատված ռադիոհաճախականությունների տիրույթում չեն ներառվել, ինչը սահմանափակել է այլ տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը նախատեսվող մրցույթին՝ այդ ռադիոհաճախականությունների մասին տեղեկացված չլինելու հետևանքով: Փաստորեն, չի ապահովվել Հանձնաժողովի կանոնադրության՝ նրա լիազորություններին վերաբերող 3 բաժնի 4) կետի ե. ենթակետի պահանջն՝ ըստ որի Հանձնաժողովն «...ապահովում է արդար և

արդյունավետ մրցակցություն մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում»:

4. Հաշվեքննությամբ պարզվել է, որ Հանձնաժողովի կայքում հրապարակվող բնական գազի ոլորտի հաշվետվություններից բնական գազի բաշխման դինամիկան արտահայտող հիմնական բնութագրերից գազամատակարարման համակարգի 2018-2020 թվականների հիմնական ցուցանիշների տեղեկանքներում (այսուհետ՝ Տեղեկանք) բաշխման համակարգում իրացված գազի ծավալում, «Էներգետիկա» բաժնում ներառվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի շոգեգազային ցիկլով էլեկտրաէներգիա արտադրող «Հրազդան - 5» կայանին մատակարարված, սակայն «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ին պատկանող՝ Իրանի հետ կնքված պայմանագրի շրջանակում էլեկտրաէներգիայի արտադրության և արտահանման համար նախատեսված գազի ծավալը:

Այսպես, 2018 թվականին Տեղեկանքի «բաշխման համակարգում իրացված գազի ծավալ» բաժնի «Էներգետիկա» մասում «Հրազդան-5» կայանին վերագրված 373 մլն խմ գազից 262,52 մլն խմ ծավալը վերը նշված նպատակով պատկանում է «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ին, հետևաբար, այդ ծավալն ու ներքին սպառման համար էլեկտրականություն արտադրելու գազի ծավալը մեկ թվով արտահայտելն, այդ երկու արտադրություններում անգամ տարբեր սակագներ ձևավորելու պարագայում, կարող է առաջացնել շփոթություն: Նույն երևույթն արձանագրվել է նաև 2019 և 2020 թվականներին: Պարզվել է նաև, որ «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի՝ իր իսկ համար, նույն նպատակով ներկրված 150 մլն խմ գազի ծավալը Տեղեկանքում գրանցվել է «փոխադրված գազի ծավալներ բաժնի» «Այլ սպառողներ» մասում: Արդյունքում, երկու տարբեր ընկերությունների համար նույն բնույթի տվյալները տեղադրվել են տարբեր բաժիններում:

Քանի որ Իրանից էլեկտրաէներգիա արտադրելու և արտահանելու նպատակով ներկրված գազը պատկանում է «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ին և այլ նպատակով չի կարող օգտագործվել, հետևաբար Տեղեկանքում՝ անկախ այն հանգամանքից, թե որ ընկերությունն է այդպիսի գազից էլեկտրաէներգիա արտադրում, տվյալ բնական գազի ծավալը պետք է արտահայտվի միևնույն դասակարգումով՝ կամ «Փոխադրված գազի ծավալներ բաժնի» «Այլ սպառողներ» մասում, կամ «Բաշխման համակարգում իրացված գազի ծավալ» բաժնի «Էներգետիկա» մասում:

5. ՀՀ-ում Էներգետիկայի ոլորտում ջերմամատակարարման համակարգում ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեություն իրականացնելու համար լիցենզավորվել է երեք ընկերություն՝ «Երևանի ԶԷԿ», «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ները և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն» ԲԲԸ-ն, որոնցից ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման լիցենզիա ունեցել է միայն «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ն, որն էլ

բնակչությանը մատակարարում է ջերմային էներգիա ու տաք ջուր և միայն նա ունի իրացման շրջանառություն:

Կենտրոնացված ջերմամատակարարման ոլորտի զարգացման նպատակով ՀՀ կառավարության ռազմավարության բացակայության պայմաններում Հանձնաժողովի 04.05.2007 թվականի թիվ 206-Ն որոշմամբ հաստատվել է օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդաբանություն, որը Հանձնաժողովի 09.06.2010 թվականի թիվ 285-Ն որոշմամբ ճանաչվել է ուժը կորցրած, որի պատճառով «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ին ջերմամատակարարման լիցենզիան տրամադրվել է ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդաբանության բացակայության պայմաններում: Առանց մեթոդաբանության հաստատվել են նաև ջերմային էներգիայի սակագները՝ հաշվի չառնելով լիցենզավորված անձի սակագնի հայտով ներկայացված ելակետային տվյալները: Սակագները սահմանելու նպատակով Հանձնաժողովի կողմից ընդունվել են 02.11.2015 թվականի ««Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ կողմից սպառողներին վաճառվող ջերմային էներգիայի սակագների սահմանման մասին» թիվ 388-Ն և 29.06.2016 թվականի «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրաբլոկից առաքվող ջերմային էներգիայի սակագները հաստատելու մասին» թիվ 195-Ա որոշումները:

Սպառողների առանձնահատկություններից ելնելով՝ սակագները սահմանվել են տարբեր մոտեցումներով՝ բնակչությանը կենտրոնացված ջերմային էներգիա և տաք ջուր մատակարարող «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի համար սակագինը սահմանվել է ըստ բնակելի մակերեսի, իսկ խոշոր սպառողներին ջերմային էներգիա մատակարարող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ- համար՝ ըստ գոլորշու 13 և 25 մթնոլորտ ճնշման:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի համար՝ ըստ Հանձնաժողովի 29.06.2016 թվականի թիվ 195-Ա որոշման, համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկից առաքվող գոլորշու ջերմային էներգիայի սակագինը հաշվարկելիս սահմանվել է բանաձև, որում ջերմային էներգիայի սակագինը կախվածության մեջ է դրվել ընկերությանը վաճառվող բնական գազի ԱՄՆ դոլարով արտահայտված գործող սակագնից և ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի մեծությունից:

«Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի համար՝ ըստ Հանձնաժողովի 02.11.2015 թվականի թիվ 388-Ն որոշման, ջերմային էներգիայի սակագինը հաշվարկվել է մատակարարված յուրաքանչյուր կՎտժ-ի և տաք ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ յուրաքանչյուր խորանարդ մետր տաք ջրի դիմաց:

Փաստորեն, կիրառվել են սակագների հաշվարկման տարբեր մեթոդաբանություններ՝ առաջինը ջերմամատակարարման մեծածախ շուկան է, որը գոյություն չունի իրացման շրջանառության բացակայության պատճառով՝ անկախ այն հանգամանքից, որ սակագնի հայտ ներկայացնելու պահին հաշվի է առնվել «Նաիրիտ» ՓԲԸ-ի ներկայում բացակայող պահանջարկը, իսկ երկրորդը՝ մանրածախ շուկան է, որի միակ մասնակիցը «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ն է, իսկ նրա մրցակիցները անհատական ջեռուցումից օգտվող բնակչությունն է: Եվ չնայած «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի թվայնալ առավելությանը՝ պայմանավորված ցածր սակագնով, այն չի հաջողվել իրացնել և տարեց-տարի ընկերության բաժանորդները պակասում են:

Ինչ վերաբերվում է ներկայացվող հայտի և Հանձնաժողովի առաջարկած հաշվարկների տարբերությանն, ապա ջերմային էներգիայի սակագնի հաշվարկի համար «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է ջերմային էներգիայի մատակարարման ծառայություններ մատուցելու համար մատչելի բնակելի շենքերի 91,5 հազ. քառ.մետր ընդհանուր մակերես, մինչդեռ Հանձնաժողովի կողմից հաշվարկի հիմքում դրվել է 225,584 հազ քառ մետր ընդհանուր մակերես՝ պատճառաբանելով, որ ըստ նախագծի լիցենզավորված անձը պարտավորվել էր ջերմային էներգիա մատակարարել 76 բնակելի շենքերին: Սակայն լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողովին ներկայացված հաշվետվությունից երևում է, որ փաստացի կառուցված բաշխիչ ցանցը կարող է ջերմային էներգիա մատակարարել միայն 91,5 հազ. քառ.մետր ընդհանուր մակերեսով 39 բնակելի շենքին:

Եվ վերջապես, լիցենզավորված անձի հայտում բերված մատակարարման ծավալների փոխարեն Հանձնաժողովը սակագնի հաշվարկի հիմքում դրել է ռազմավարական ծրագրով նախատեսված մատակարարման ծավալ, որի ապահովման ուղիներն իրականում գոյություն չունեն, քանի որ կպահանջեն նոր կապիտալ ծախսեր և նոր ջերմագծերի կառուցում: Հետևաբար, Հանձնաժողովի կողմից սակագինը հաշվարկվել և սահմանվել է ծառայությունների մատուցման անիրատեսական ծավալների հիման վրա:

6. Հաշվի առնելով գործող իրավակարգավորումները և բազիսային սակագնի ճշգրտման գործոնները՝ «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ն 08.08.2018 թվականին դիմել է Հանձնաժողով՝ վարձակալության 3-րդ տարվա (2019 թվական) համար ծառայությունների մատուցման ճշգրտված սակագները սահմանելու հայտով, որով 194.4 դրամ կազմող ջրամատակարարման մանրածախ ծառայությունների մատուցման բազիսային սակագնի փոխարեն առաջարկվել է սահմանել 205.123 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ), կամ 10.7 դրամով ավելի սակագին:

Լիցենզիայի պայմանների 28-րդ կետի ուժով Հանձնաժողովի կողմից կատարվել է սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ

ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ, որի արդյունքում 2019 թվականի համար ճշգրտված սակագինը հաստատվել է 202.272 դրամ/խմ, կամ բազիսային սակագինը գերազանցվել է 7.872 դրամով:

Սակայն, ձևակերպվել է ոչ միայն **բազիսային սակագինը** գերազանցող՝ 7.872 դրամով ավելանալու, այլև վարձակալության **առաջին տարվա սակագինը** գերազանցող՝ 22.272 դրամով բարձրացնելու ռիսկերը չեզոքացնելու խնդիր: Այդ նպատակով Հանձնաժողովը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե) և «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև 26.11.2018 թվականին փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո՝ 28.11.2018 թվականին ընդունել է թիվ 434-Ն որոշումը, որտեղ հաշվի առնելով Վարձակալության պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 8 Համաձայնագիրը՝ ըստ որի 2019 թվականի մանրածախ սակագները 2017 թվականի մակարդակին պահպանելու նպատակով, 2019 թվականի համար նախատեսվող 10.858 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ) սակագնի աճը տեղափոխվել է 2025 թվական, ինչպես նաև 2019 թվականի պետական բյուջեով նախատեսվել է սուբսիդիա՝ սակագինը ևս 11.414 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ) նվազեցնելու համար: Արդյունքում 2019 թվականի սակագինը սահմանվել է 180.0 դրամ/խմ:

Սակագնի աճի տեղափոխումը պայմանավորված էր պարտադիր կապիտալ աշխատանքների կատարումը մինչև 2025 թվական հետաձգումով, սակայն իրականում 2018 թվականի թիվ 8 Համաձայնագրով 2019 թվականին հետաձգված չափով կապիտալ աշխատանքների ծավալը ստանձնել էր Վարձատուն: Հետևաբար, պարտավորությունը պետք է մարված համարվեր, իսկ սակագնի բարձրացման հետաձգման պահանջը՝ վերանար: Իրականում, Վարձատուն ստանձնել էր վարձակալի տվյալ տարվա պարտադիր կապիտալ աշխատանքների ծավալի (այսուհետ՝ ՊԿԱԾ) հետաձգվածին համարժեք ծավալ, դրա համար նախատեսվեցին բյուջետային միջոցներ, թեև ժամկետների երկարաձգմամբ, բայց իրականացվեցին:

7. 2007-2017 թվականներին ոռոգում ջրառի համակարգում իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ, ընկերությունների վերակազմավորումներ և ներդրումային ծրագրեր, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել ոռոգման ջրի սակագնի վրա, մինչդեռ վերջինս պահպանվել է Հանձնաժողովի 2007 թվականի մարտի 1-ի թիվ 61-Ա որոշմամբ սահմանված սակագնի մակարդակին և «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից այդ ընթացքում սակագնի վերանայման հայտ չի ներկայացվել:

Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի «Ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգը հաստատելու և ՀԾԿ Հանձնաժողովի 2004 թվականի օգոստոսի 9-ի թիվ 97-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 296-Ն որոշման 3-րդ կետի 21-ի 1) ենթակետով սահմանվել է, որ Հանձնաժողովը

կարող է վերանայել գործող սակագները և սահմանել նոր սակագներ՝ ելնելով խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կամ ոռոգման ջրամատակարարման ծառայություն մատուցող անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից, սակայն Հանձնաժողովը չի իրացրել իրեն վերապահված՝ սեփական նախաձեռնությամբ սակագների վերանայման գործառույթը:

8. Հանձնաժողովի կողմից փոքր ՀԷԿ-երին տրամադրվել են էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիաներ: Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է ոռոգման համակարգերի վրա կառուցված թվով 22 փոքր ՀԷԿ-երի 2019-2020 թվականներին արտադրված էլեկտրական էներգիայի տվյալները, որոնք համադրվել են համապատասխան ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման պայմանների հետ, որի արդյունքում պարզվել է, որ թվով 6 ընկերությունների մոտ հայտնաբերվել են ջրօգտագործման սահմանված ծավալների ու ռեժիմների չպահպանման փաստեր: Մասնավորապես, այդ ընկերությունների փոքր ՀԷԿ-երը արտադրել են էլեկտրաէներգիա ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ժամանակահատվածի համար (ոչ ոռոգման սեզոնին) չնախատեսված ամիսներին, ինչը հակասում է ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջներին՝ ըստ որոնց ջրօգտագործումը չպետք է գերազանցի ջրօգտագործման թույլտվության մեջ սահմանված չափաքանակները: Տվյալ դեպքում այդ ընկերությունների կողմից, որոնց գործունեությունն է՝ ջրօգտագործման արդյունքում էլեկտրաէներգիայի արտադրությունը, չի կատարվել Լիցենզիայի պայմանների 12-րդ կետի պայմանը, որով սահմանվել է, որ «Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, սույն լիցենզիայի, ցանցային կանոնների, առևտրային կանոնների, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին»: Լիցենզիայի 28-րդ կետով սահմանվել է, որ «Լիցենզավորված գործունեության վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը», նշված լիազորությունը սահմանվել է նաև Հանձնաժողովի կանոնադրության 11-րդ կետի 1) գ. ենթակետում: Փաստորեն, Հանձնաժողովն իր տրամադրության տակ ունենալով փոքր ՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվությունները և էլեկտրաէներգիայի արտադրության հաշվետվությունները, քայլեր չի ձեռնարկել նրանց կողմից լիցենզիայի պայմանների 12-րդ կետի պահանջի վերը նշված խախտումը կանխելու ուղղությամբ:

VII. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է Կարգավորման պարտադիր վճար հասկացությունը, որի համաձայն «Կարգավորման պարտադիր վճարները ՀՀ օրենքներով սահմանված Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են»:

Հանձնաժողովի լիազորությունները նրա կանոնադրությամբ սահմանված նպատակների, խնդիրների իրագործման համար են: Իսկ պարտադիր վճարների մեծությունը որոշվում է ելնելով կարգավորվող ծառայություններ մատուցողների սակագների հաշվարկման համար հիմք հանդիսացող կանխատեսված իրացման շրջանառություններից, առանց ԱԱՀ-ի:

Սույն դիտարկման առումով ջերմամատակարարման համակարգը Կարգավորվող ծառայությունների համակարգերից մեկն է, որտեղ լիցենզավորված են երեք ընկերություն, սակագները սահմանված են երկու ընկերությունների համար, որոնցից մեկը չունի իրացման շրջանառություն, մյուսը ունի, սակայն այն չի կազմում անգամ կանխատեսվածի 10.0 %-ը, տարեցտարի նվազում և ձգտում է գրոյի: Այս համակարգում 2016 թվականից ի վեր սակագները չեն փոփոխվել, իսկ տվյալ տարվա սակագինը հաստատելու համար որպես հիմք ընդունվել է կանխատեսված իրացման շրջանառությունը, որը մինչև օրս գոյություն չունի: Օրինակ, 2019 թվականի համար այդ կառուցակարգով կանխատեսվել է 7,712.0 մլն դրամի չափով իրացման շրջանառություն, որն իրականում կազմել է ընդամենը 56.0 մլն դրամ, կամ կանխատեսվածի 0.7 %-ը, իսկ 2020 թվականին կանխատեսված 7,752.0 մլն դրամի դիմաց իրացման շրջանառությունը կազմել է 44.0 մլն դրամ, կամ կանխատեսվածի 0.57 %-ը:

Հաշվեքննվողի առարկությունները՝ «Օրենքն ընդունվել էր 2005 թվականին և անցած տարիների ընթացքում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում տեղի էին ունեցել զգալի զարգացումներ, որի արդյունքում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ կարգավորվող ոչ բոլոր անձանց համար էր Հանձնաժողովը սահանում սակագներ, որի արդյունքում վերջիններս դուրս էին մնում կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկից՝ չնայած նշված անձանց մասով Հանձնաժողովն իրականացնում էր և ներկայումս էլ իրականացնում է համապատասխան գործառույթներ: Մասնավորապես, հեռահաղորդակցության բնագավառում Հանձնաժողովն իրականացնում է ամբողջական կարգավորում,

սակայն նշված շուկայում առկա մրցակցության պայմաններում սակագների կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է և գրեթե չի իրականացվում:»

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Առարկությունը չի ընդունվել քանի որ դրանով ենթադրվում է, որ կան բնագավառներ, որոնցում Հանձնաժողովն իրականացնում է կարգավորումներ, սակայն կարգավորվող անձանցից պարտադիր վճարներ չեն գանձնվում, իսկ ջերմամատակարարման բնագավառում կարգավորումներ չեն իրականացվում, իրացման շրջանառությունները ձգտում են գրոյի, սակայն կարգավորվող անձանցից գանձվում են պարտադիր վճարներ:

2. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում հաշվարկել և սահմանել է պարտադիր վճարների չափեր: Բացի ջերմամատակարարման համակարգից, հանրային ծառայությունների մնացած կարգավորվող ոլորտներում սակագնի հաշվարկի համար կանխատեսվել է իրացման շրջանառություն, որն այնուհետև չի ճշգրտվել փաստացի ծավալներով, մինչդեռ իրական իրացման շրջանառությունն որոշ վճարողների դեպքում գերազանցել, իսկ որոշների դեպքերում՝ նվազել է կանխատեսված ծավալը: Արդյունքում, առաջացել է իրական ցուցանիշից էականորեն տարբերվող պարտադիր վճարի մասով պարտավորություն:

2019 թվականին Հանձնաժողովի կողմից հաստատված կարգավորման տարեկան պարտադիր վճարները՝ համեմատելով փաստացի իրացման շրջանառությունից ելնելով հաշվարկված պարտադիր վճարների հետ, պարզվել է, որ փաստացի շրջանառություններով ճշգրտելու դեպքում սակագներով սահմանված մեծ իրացման շրջանառություն ունեցող թվով 4 ընկերությունների («Հրազդանի էներգետիկ կազմակերպություն ՀրազՁԷԿ» ԲԲԸ, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և «Տրանսգազ» ՍՊԸ) մոտ կառաջանար լրացուցիչ 51.9 մլն դրամ վճարելու պարտավորություն, իսկ կանխատեսվածի նկատմամբ փոքր իրացման շրջանառություն ունեցող թվով 11 ընկերությունների («Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Հրազդան -5» կայան, «ՎեՈՆ Արմենիա» ՓԲԸ, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» և թվով 7 այլ ընկերություններ) մոտ՝ նույն չափով գումարի հաշվանցման հնարավորություն:

Ինչ վերաբերվում է վերը հիշատակված ջերմամատակարարման համակարգին, ապա «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի համար սակագնի հաշվարկում հաշվի է առնվել 7,089.8 մլն դրամ իրացման շրջանառությունը, սակայն 2019 թվականին իրականում ջերմություն չի մատակարարվել, հետևաբար՝ ըստ «Պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի բ) ենթակետի, սույն վճարողի իրացման շրջանառության տեսակարար կշիռը 0-է, ինչը նշանակում է, որ նրանից պարտադիր վճար չպետք է գանձվեր, մինչդեռ նրա պարտադիր վճարը հաշվարկվել է 10.6 մլն դրամի չափով: Նույն համակարգում գործող

«Հայռուսկոգեններացիա» ՓԲԸ-ի սակագնի հաշվարկում նշվել է 621.7 մլն դրամ իրացման շրջանառություն, մինչդեռ 2019 թվականին նրա փաստացի իրացման շրջանառությունը կազմել է 56.0 մլն դրամ, հետևաբար, նրա իրացման շրջանառության տեսակարար կշիռը կազմել է 0,01%, ինչը նշանակում է, որ պարտադիր վճարը պետք է հաշվարկվեր 79.0 հազ դրամի չափով՝ հաշվարկված 927.6 հազ. դրամի փոխարեն:

Նույն երևույթն արձանագրվել է նաև 2020 թվականին, երբ փաստացի շրջանառություններով ճշգրտելու դեպքում սակագներով սահմանված մեծ իրացման շրջանառություն ունեցող թվով 3 ընկերությունների մոտ կառաջանար լրացուցիչ 58.5 մլն դրամ վճարելու պարտավորություն, իսկ կանխատեսվածի նկատմամբ փոքր իրացման շրջանառություն ունեցող թվով 11 ընկերությունների մոտ՝ նույն չափով գումար հաշվանցելու հնարավորություն:

Հաշվեքննվողի առարկությունը՝ «Հանձնաժողովը դեռևս 2019 թվականից նախաձեռնել էր Օրենքում փոփոխությունների մշակում, որն էլ ներկայացվել էր ՀՀ կառավարություն՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով: Արդյունքում, 2021 թվականի նոյեմբերի 18-ին ընդունվել և դեկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» նոր օրենքը, համաձայն որի վերանայվել է կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկը և վճարների հաշվարկման մոտեցումները: Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողներ են համարվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում գործունեություն իրականացնող խոշոր ընկերությունները՝ անկախ սակագնային կարգավորման ենթակա լինելու հանգամանքից, իսկ կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման համար էլ հիմք է ընդունվում հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճար վճարողների՝ կարգավորվող ոլորտում գործունեության հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի իրացման շրջանառությունը:

Հետևաբար, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման գործառույթի մասով Արձանագրությամբ բարձրացված խնդիրները ոչ թե ենթակա էին լուծման Օրենքի շրջանակում, այլ կարող էին իրականացվել միայն Օրենքի փոփոխությունների արդյունքում, ինչն էլ իրականացվել է Հանձնաժողովի նախաձեռնությամբ և 2022 թվականի համար հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներն էլ արդեն իսկ հաշվարկվել ու սահմանվել են նոր օրենքի պահանջներին համապատասխան:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Համաձայնելով սույն դիտարկմանը, հարկ է նշել, որ ինչպես ցույց են տալիս սահմանված պարտադիր վճարների չափերը, այդ սակագները տարիներ շարունակ կարող են չփոփոխվել և այդ տարբերությունները կարող են շարունակ մեծանալ: Հատկանշական է, որ

Հանձնաժողովը՝ կիրառելով Օրենքը 2005 թվականից, միայն 2019 թվականին է նախաձեռնել սակագները հաշվարկելիս փաստացի իրացման շրջանառությունը որպես հիմք ընդունելու մասին օրենսդրական փոփոխության կատարումը, որը, սակայն, ուժի մեջ է մտել միայն 2022 թվականից:

3. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմանների 28-րդ կետի ուժով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի սակագնի ճշգրտման հայտի ուսումնասիրման շրջանակում իրականացնում է սակագների հաշվարկներում ներառվող փաստացի մանրաձախ ջրամատակարարման ծավալների մոնիթորինգ, որի նպատակն է բացահայտել ջրամատակարարման չհաշվառված ծավալներ: Մոնիթորինգներն իրականացվել են երկու փուլով՝ առանց սահմանված մեթոդաբանության, լիցենզավորված անձի հետ փոխադարձ համաձայնությամբ, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ և ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի աջակցությամբ Երևանի, այնուհետև՝ մարզերի սպասարկման տարածքներում հետևալ մոտեցումներով՝

ա) գրոյական սպառում ունեցող սպառողների մոտ, որտեղ լրացուցիչ ծավալը հավասար է մոնիթորինգի արդյունքում գրանցված և լիցենզավորված անձի բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ,

բ) ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով՝ 90 օրվա համար:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ բացի շարադրվածից, մոնիթորինգը կատարվել է լիցենզավորված անձի հետ նաև հետևյալ պայմանավորվածությունների համաձայն.

գ) մոնիթորինգի օբյեկտների (առարկաների) որոշման համար նախնական վերլուծության է ենթարկվում լիցենզավորված անձի մոտ հաշվառված իրավաբանական անձ բաժանորդների սպառած խմելու ջրի քանակական տվյալների բազան, որտեղից ընտրվում է մոտ 2000 բաժանորդ, իսկ ֆիզիկական անձ բաժանորդներին անդրադառնում են, եթե մոնիթորինգի ենթարկվող իրավաբանական անձանց հարևանությամբ հանդիպող ֆիզիկական անձանց մոտ նկատվում են կասկածելի սպառման հանգամանքներ,

դ) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկներում ներառվում են միայն փաստացի բացահայտված մանրաձախ ջրամատակարարման չհաշվառված ծավալները:

Որպես ջրամատակարարման իրական ծավալների վերհանման խնդրի լուծման միջոց չեն օգտագործվել ծրագրային բյուջետավորման հնարավորությունները: Չեն գործադրվել նաև պետական մասնավոր

համագործակցության կառուցակարգերը՝ ավելի ընդգրկուն կիրառելու համար խմելու ջրի մատակարարման համակարգը վարձակալության հանձնելու մրցութային փաթեթով ստանձնած պարտավորությունները, որոնք սահմանվել են վարձակալի տեխնիկական առաջարկով: Բերված առաջարկների համաձայն՝ անհրաժեշտ է առևտրային նոր քաղաքականության մշակում և իրականացում, որի դեպքում կորուստների նվազեցման հիմնական դերի և իրավիճակի բարելավման վերապահումներով, ինչպես նաև առևտրային կորուստների կայուն նվազեցման նպատակով ձեռնարկվող գործուղություններ: Ներկայացվածը նշանակում է, որ վարձակալը շահագրգռված է հաշվառված ջրի ծավալների մեծացման գործում, հետևաբար չեն գտնվել համագործակցության ավելի գործուն կառուցակարգեր:

Հաշվեքննվողի առարկությունները՝ «Վարձակալության պայմանագրի ընդհանուր պայմանների 9-րդ հոդվածի 9.1 (2) կետով ամրագրվել է, որ եթե Հանձնաժողովը չհաստատի հայտատուին ուղարկված մրցակցային փաթեթում ներառված լիցենզիայով սահմանված պայմաններով ճշգրտվող բազիսային սակագինը կամ փոխվի սակագնի հաշվարկի մեթոդոլոգիան, որի արդյունքում վարձակալի («Վեոլիա Ջուր» ՓԲԸ) համար չի հաստատվի լիցենզիայի պայմանների համաձայն ճշգրտված սակագինը, ապա վարձատրուն (ՀՀ կառավարությունը) կփոխհատուցի վարձակալին սակագների միջև եղած տարբերությունը, իսկ չկատարելը կդիտվի որպես վարձատրի կողմից Վարձակալության պայմանագրի վաղաժամկետ չպատճառաբանված դադարեցում՝ ըստ Վարձակալության պայմանագրի ընդհանուր պայմանների 3.8.3 հոդվածի, որի դեպքում վարձակալը փոխհատուցում սրանալու իրավունք ունի:»

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Հանձնաժողովի կողմից վկայակոչված կետը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «(2) Եթե ՀՀ ՀԾԿՀ-ն չհաստատի հայտատուին ուղարկված մրցակցային փաթեթում ներառված լիցենզիայով սահմանված պայմաններով ճշգրտվող բազիսային սակագինը կամ փոխվի սակագնի հաշվարկի մեթոդոլոգիան, որի արդյունքում Վարձակալի համար չի հաստատվի Լիցենզիայի պայմանների համաձայն ճշգրտված սակագինը, ապա Վարձատրուն կփոխհատուցի Վարձակալին սակագների միջև եղած տարբերությունը, որը չկատարելը կդիտվի որպես Վարձատրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ չպատճառաբանված դադարեցում՝ ըստ ԸՊ 3.8.3 հոդվածի, որի դեպքում Վարձակալը փոխհատուցում ստանալու իրավունք ունի:»

Ըստ էության, հաշվեքննության արձանագրությունում սակագնի հաշվարկի մեթոդոլոգիայի փոփոխման հարց չի քննարկվել, այլ հարցը վերաբերում է ընդունված մեթոդաբանությամբ միայն փաստացի ջրամատակարարման ծավալների որոշմանը, ինչը յուրաքանչյուր տարի սակագնի պարտադիր ճշգրտման վրա ազդող կարևորագույն գործոններից է: Կորուստները հակառակ համեմատական են փաստացի ջրամատակարարման ծավալներին և միանգամայն

տրամաբանական է, որ փաստացի ջրամատակարարման ծավալների վերհանման նպատակով Հանձնաժողովը նախաձեռնել է մոնիթորինգների անցկացումն՝ անկախ առարկություններում բերված հանգամանքից, այն է՝ «գործող իրավակարգավորումներում, այդ թվում՝ թե վարձակալության պայմանագրում, թե ընկերությանը տրամադրված լիցենզիայի պայմաններում սակագների ճշգրտման հաշվարկներում ներառելու նպատակով փաստացի ջրամատակարարման ծավալների մոնիթորինգի իրականացման վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ:»

Ակնհայտ է, որ ջրաղբյուրներից 550 մլն խմ և ավել վերցված խմելու ջրից ներկայիս 400 մլն խմ և ավել (75%) կորուստներն են, խմելու ջրի հաշվառված սպառումը կազմում է շուրջ 180 մլն խմ՝ ջրաղբյուրներից վերցրած ջրերի 25%-ը, Հանձնաժողովի որդեգրած մոտեցումով անհրաժեշտ է զգալի արդյունք ակնկալել: Մինչդեռ տարեկան մոնիթորինգի ենթարկվող մոտ 2000 իրավաբանական անձինք կազմում են բոլոր իրավաբանական անձ բաժանորդների մոտ 2%-ը, իսկ ֆիզիկական անձ բաժանորդները հարյուր հազարներ են հաշվվում, սակայն նրանց կազմից խոցելի բաժանորդներ չեն վեր հանվում: Այստեղից պարզ է դառնում, որ այս ճանապարհով տարեկան բացահայտելով 1-2 մլն խմ չհաշվառված, բայց փաստացի մատակարարվող խմելու ջուր, 400 մլն խմ կորուստը հնարավոր կլինի հաշվառել 200 տարվա ընթացքում, կամ վարձակալական ժամանակաշրջանում հնարավոր կլինի հաշվառել ներկայիս կորուստների 7-8%-ը:

Մեծածավալ կորուստների վերհանումը, դրանք փաստացի ջրամատակարարման հաշվառված ծավալներում ներառելը կարող է հանգեցնել հաշվառված ջրամատակարարման ծավալների մեծացմանը, որի շնորհիվ՝ սակագնի նվազմանը, ինչից կարող էին շահել բաժանորդ սպառողները, ինչն ամրագրվել է նաև Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված նպատակներում, որոնք թերի են իրականացվել: Ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովի առարկությունները չեն ընդունվել:

4. Հանձնաժողովը լիցենզիայի պայմանների 3-րդ հավելվածի (Սակագներ և սակագնի ճշգրտումներ) 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ խմելու ջրամատակարարման բաժանորդների որոշ մասին մատուցել է ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություն, որի սակագինը սահմանվել է անուղղակիորեն և կապ չունի ջրահեռացման ծավալների, կոյուղագծերի շահագործման, սպասարկման, առավել ևս՝ կոյուղաջրերի մաքրման ծախսերի հետ: Բաժանորդը վճարել է լիարժեք ջրամատակարարման սակագինը, եթե միացված է ջրահեռացման համակարգին, իսկ վերջինիս միացված չլինելու պարագայում՝ այդ սակագնի 85%-ը: Փաստորեն, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագնի անվանումը ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման մասին է և կապ չունի մաքրման հետ:

Վարկային միջոցներով արդեն 4 տարի առաջ կառուցված Աէրացիայի նոր մաքրման կայանը, ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին չի հաջողվում հանձնել շահագործման՝ օպերատոր չգտնվելու պատճառով: Միաժամանակ, վարձակալական պայմանագրով սահմանվել են կեղտաջրերի մաքրման չափանիշներ, որոնք պետք է ապահովվեն վարձակալության հանձնված կոյուղաջրերի մաքրման Աէրացիայի հին կայանի շահագործումով, սակայն չեն ապահանջվում: Ըստ տեխնիկական աուդիտորի՝ դրանք չեն ապահանջվում այդպիսի տեխնոլոգիաներ կամ հնարավորություններ չունենալու պատճառով, մինչդեռ նոր կայանն ունի այդպիսի տեխնոլոգիաներ կիրառելու հնարավորություններ, սակայն չի հանձնվել/ընդունվել շահագործման: Արդյունքում, տեխնիկական աուդիտորն՝ ունենալով լիցենզավորված անձի «մաքրված կեղտաջրերի որակը» QS3 ներքին համեմատական ցուցանիշի վերաբերյալ հաշվետվությունը գնահատելու և բարելավելու առաջարկություններ անելու պարտավորություն, վարձակալության չորրորդ տարում առաջարկել է տվյալ չափանիշն այլևս հսկողության չենթարկել մինչև լիցենզավորված անձի կողմից տվյալ խնդրով ներդրումների կատարումն, այն դեպքում, երբ այդ ներդրումները վարձատուի կողմից արդեն իսկ կատարվել են՝ մատնվելով պարապուրդի:

Իրականում վարձակալի համար միևնույն է, թե ինչ ծավալի կոյուղաջուր է մտնում կեղտաջրերի մաքրման կայան, որքանով այդ կոյուղաջրերը մաքրման կենթարկվեն: Այսպես, 2020 թվականին վթարի պատճառով ամիսներ շարունակ կոյուղաջրերի մոտ 2/3-ը լցվել են Հրազդան գետ՝ չհասնելով Աէրացիա կեղտաջրերի մաքրման կայան: Որպես հետևանք Հանձնաժողովի կողմից լիցենզիայի պայմաններով սահմանված սակագինը չի կատարել իր ֆինանսատնտեսական գործառույթը:

Հաշվեքննվողի առարկությունները՝ «ՀՀ ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ կեղտաջրերի մաքրման ծառայությունը սահմանված է ջրահեռացման ծառայության հետ միաժամանակ, այլ ոչ թե որպես առանձին ծառայություն, ինչն էլ իր արտացոլումն է գտել Վարձակալության պայմանագրին համապատասխան «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմաններում:»

Ակնհայտ է, որ կեղտաջրերի մաքրումը ջրահեռացման ծառայության հետ մեկտեղ սահմանված լինելը դրանք առանձին ծառայություն դիտարկելու անհնարինության մասին է վկայում և ոչ մի դեպքում չի կարող նշանակել, որ դրանով հնարավորություն է ստանում կեղտաջրերի հեռացումն առանց մաքրման, առանց այդ մաքրումն ապահովող տեխնոլոգիական ու ֆինանսական բաղադրիչների: Իսկ Սակագինը սահմանվում է հատկապես ծառայության այդ բաղադրիչների համապատասխանությունը չափելու համար:

Արձանագրությամբ ամրագրված այն եզրահանգումը, թե Հանձնաժողովի սահմանած սակագինը չնայած ջրահեռացման (կեղտաջրերի) մաքրման մասին է, մինչդեռ կապ չունի մաքրման հետ և չի կապարում իր ֆինանսատնտեսական գործառույթը, չի բխում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառվող սակագնային կարգավորումներից:

Միաժամանակ, Արձանագրության մեջ բարձրացված են հարցեր (այդ թվում՝ Աէրացիայի ԿՄԿ-ի հանձման հետ կապված), որոնք Հանձնաժողովի իրավասությունների տիրույթում չեն և Վարձակալության պայմանագրի կողմերի միջև քննարկման ենթակա հարցեր են»:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ Հանձնաժողովի կողմից ներկայացված առարկությունը չի ընդունվել, քանի որ նրա կողմից չի ապահովվել օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված մի շարք հետևյալ նպատակների, խնդիրների և գործառույթների իրականացումը, քանի որ, կանոնադրության 9-րդ կետով սահմանված՝ «1) հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը» նպատակի «սպառողների շահերի» տակ հասկացվում է նաև շրջակա միջավայրի վերաբերյալ խնդիրների կարգավորումը, միևնույն ժամանակ ըստ 11-րդ կետի 2-րդ ենթակետում ամրագրված՝ ջրային ոլորտին վերաբերող Հանձնաժողովի լիազորությունների համաձայն՝ նա «ա. սահմանում է ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները և դրանց հաշվարկման (մշակման) մեթոդիկաները» և «դ. սահմանում է խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները»:

VIII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանձնաժողովին չի հաջողվել ջերմամատակարարման համակարգում ստեղծել կարգավորման համապատասխան մեխանիզմներ և իրականացնել դրանց ապահովմանն ուղղված միջոցառումներ, որի արդյունքում տվյալ կարգավորվող համակարգը չի կայացել:

2. Հանձնաժողովի կողմից կարգավորվող անձանց համար պարտադիր վճարները հաշվարկվել և սահմանվել են սակագների հաշվարկի մեջ օգտագործվող կանխատեսված իրացման շրջանառություններից ելնելով, որոնք էականորեն տարբերվել են փաստացի ցուցանիշներից, որի արդյունքում կարգավորվող անձանց համար գործունեության միատեսակ պայմաններ չեն ստեղծվել:

3. Հանձնաժողովը բավարար չափով չի իրականացրել իր կանոնադրությամբ սահմանված՝ սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը հավասարակշռելու և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խթանելու նպատակները, ինչպես նաև հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում կարգավորման համապատասխան մեխանիզմներ ստեղծելու և դրանց ապահովմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ խնդիրները՝ ուղղված սակագնի աճի վրա ազդող գործոնների չեզոքացմանը, ջրամատակարարման համակարգում մեծածավալ կորուստների վերացմանը, ըստ այդմ Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի սակագնի նվազմանը:

4. Հանձնաժողովը չի ապահովել ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների կապը կեղտաջրերի հեռացման ծավալից ու մաքրման աշխատանքներից հանգեցնելով շրջակա միջավայրի վերաբերյալ խնդիրների առաջացմանը, սպառողների և գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռության խախտմանը, ըստ այդմ, նպատակային արդյունավետության (օգտավետության) տեսակետից սահմանված նպատակների ոչ պատշաճ իրագործմանը:

5. Հանձնաժողովը «Զրառ» ՓԲԸ-ի դեպքում չի իրացրել իր՝ 2016 թվականի նոյեմբերի 2-ի «Զրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգը հաստատելու և Հանձնաժողովի 2004 թվականի օգոստոսի 9-ի թիվ 97-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 296-Ն որոշման 3-րդ կետի 21-ի 1) ենթակետով իրեն վերապահված՝ սեփական նախաձեռնությամբ սակագների վերանայման գործառույթը:

6. Պատշաճ հսկողություն չի իրականացվել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ «Հ» տառով նշված գործունեության տեսակներով

գրադվող լիցենզավորված անձանց կողմից հաշվետվությունների ներկայացման պահանջի կատարման նկատմամբ:

7. Չի ապահովվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ իրավասու մարմնին հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ առաջարկելու վերաբերյալ պահանջի կատարումը:

8. Հանձնաժողովի կողմից չի կատարվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքից բխող՝ հանրային խորհրդակցությունից հետո օրենքի դրույթները կամ լիցենզիայի կամ թույլտվության պայմանները կամ Կարգավորողի ընդունած իրավական ակտերը (ներառյալ՝ կանոնները և կանոնակարգերը) խախտելու համար պատժամիջոցների կիրառման կանոններ և կարգեր հաստատելու վերաբերյալ դրույթի պահանջը:

9. Չի ապահովվել նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կատարումը՝ կապված Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով ստուգումներ և աուդիտ իրականացնելու հետ:

10. Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել ջրային ոլորտում գործող «Զրառ» ՓԲԸ-ի լիցենզավորմանն առնչվող օրենսդրական դաշտում՝ ՀՀ ջրային օրենսգրքի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի միջև առկա անհամապատասխանությունների և հակասությունների վերացման նպատակով, որի արդյունքում ոչ մրցակացային ոռոգման ջրամատակարարում իրականացնող միակ ընկերությունը դեռևս գործունեություն իրականացնում է առանց լիցենզիայի:

11. «1064-11001 Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում» միջոցառման «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» 2019-2020 թվականների հաշվետվություններում որոշ արդյունքի չափարոշիչներ ըստ ոլորտների չեն ներկայացվել, բացակայում են ժամկետային, որակական և այլ ցուցանիշները՝ արտացոլվել են միայն քանակական ցուցանիշները:

12. Հանձնաժողովի կողմից բավարար աշխատանք չի կատարվել պարտադիր վճարների հաշվարկման և պետական բյուջե փոխանցման ուղղությամբ՝ հաշվեքննության շրջանակներում ընտրանքային կարգով իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ռադիոհաճախականության օգտագործման ոլորտում գործող ամենախոշոր օպերատորներից «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի մոտ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց 2020 թվականին առաջացել է պետական բյուջե վճարման ենթակա 61,453.31 հազ. դրամի չափով տույժի գծով չմարված պարտավորություն:

13. Հանձնաժողովի կողմից չի ապահովվել իր կանոնադրությամբ սահմանված պահանջն՝ ըստ որի նա «...ապահովում է արդար և արդյունավետ մրցակցություն մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում», մինչդեռ 2019 թվականին կայանալիք ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման նպատակով կազմակերպվելիք մրցույթից առաջ նպատակահարմար չի համարել 4-րդ օպերատորի մուտքը հանրային շարժական կապի ծառայությունների շուկա՝ մրցույթին ներկայացվող ռադիոհաճախականությունների ցանկում չներառելով դրանց ամբողջական տիրույթը:

14. Անհրաժեշտ ուշադրություն չի հատկացվել Հանձնաժողովի կայքում տեղակայված գազամատակարարման համակարգի 2018-2020 թվականների հիմնական ցուցանիշների տեղեկանքներում «փոխադրված գազի ծավալը» բաժնի «այլ սպառողներ» մասում և «բաշխման համակարգում իրացված գազի ծավալ» բաժնի «Էներգետիկա» մասում ներկայացվող տեղեկատվության ճշտությանը:

15. Հանձնաժողովի կողմից ջերմային էներգիայի մատակարարման ոլորտում օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկը կատարվել է ծառայությունների մատուցման անհրատեսական ծավալների հիման վրա, հաշվի չառնելով լիցենզավորված անձի սակագնի հայտով ներկայացված ելակետային տվյալները:

16. Հանձնաժողովը հաշվի առնելով Ջրային համակարգի Վարձակալի պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի 2019 թվականի համար նախատեսվող աշխատանքների մի մասը փոխանցվել է 2025 թվական, սակագնի համարժեք աճը նույնպես տեղափոխել է նույն ժամանակահատվածով: Մինչդեռ, հետաձգված պարտադիր կապիտալ աշխատանքների կատարումն իրականում ստանձնել է վարձատուն, հետևաբար, պարտավորությունը պետք է մարված համարվեր, իսկ սակագնի բարձրացման հետաձգման պահանջը պետք է վերանար:

17. Հանձնաժողովը թերացել է իր կանոնադրությամբ և Լիցենզիայի պայմանների 28-րդ կետով սահմանված՝ փոքր ՀԷԿ-երի գործունեության վերահսկման, նրանց կողմից ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների խախտումները կանխելու գործում: Հանձնաժողովն իր տրամադրության տակ ունենալով փոքր ՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվությունները և էլեկտրաէներգիայի արտադրության հաշվետվությունները, քայլեր չի ձեռնարկել նրանց կողմից լիցենզիայի պայմանների 12-րդ կետի պահանջի խախտումը կանխելու ուղղությամբ:

IX. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քննարկել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտների շրջանակում ջերմամատակարարման համակարգը չդիտարկելու հարցը, մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից բնագավառի զարգացման ռազմավարություն հաստատելը և կարգավորման համապատասխան մեխանիզմներ ստեղծելը:

2. Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի սակագնի աճի վրա ազդող գործոններից փաստացի ջրամատակարարման հաշվառումը որակական նոր մակարդակի հասցնելու նպատակով Ջրային համակարգերի Վարձակալական պայմանագրի կողմերի հետ համագործակցել մրցութային փաթեթում Վարձակալի տեխնիկական առաջարկով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

3. Հայաստանի Հանրապետությունում ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագինը կեղտաջրերի հեռացման ու մաքրման աշխատանքների ծավալի հետ կապակցելու նպատակով Ջրային համակարգերի Վարձակալական պայմանագրի կողմերի հետ նախաձեռնել բանակցություններ:

4. Քննարկել Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի «Ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգը հաստատելու և Հանձնաժողովի 2004 թվականի օգոստոսի 9-ի թիվ 97-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 296-Ն որոշման 3-րդ կետի 21-ի 1) ենթակետով իրեն վերապահված՝ սեփական նախաձեռնությամբ «Ջրառ» ՓԲԸ-ի սակագների վերանայման հարցը:

5. Ապահովել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ «Հ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձանց կողմից հաշվետվությունների ներկայացման պահանջի կատարումը:

6. Պահպանել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջը՝ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներն առաջարկել իրավասու մարմնին՝ անկախ Հանձնաժողովի կողմից այս կամ այն ստանդարտի ընդունման հանգամանքից:

7. Քննարկել Հանձնաժողովի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքից բխող՝ հանրային խորհրդակցությունից հետո օրենքի դրույթները կամ լիցենզիայի կամ թույլտվության պայմանները կամ Կարգավորողի ընդունած իրավական ակտերը (ներառյալ՝ կանոնները և կանոնակարգերը) խախտելու համար պատժամիջոցների կիրառման կանոնները և կարգերը հաստատելու վերաբերյալ դրույթի պահանջի կատարման հնարավորությունները՝ հարցի լուծումն ապահովելու նպատակով:

8. Միջոցներ ձեռնարկել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կատարումն ապահովելու, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով ստուգումներ և աուդիտ իրականացնելու համար:

9. Մշակել առաջարկություններ ջրային ոլորտում գործող «Ջրառ» ՓԲԸ-ի լիցենզավորմանն առնչվող օրենսդրական դաշտում՝ ՀՀ ջրային օրենսգրքի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի միջև առկա անհամապատասխանությունները և հակասությունները վերացնելու, ոռոգման ջրամատակարարում իրականացնող ընկերության գործունեության լիցենզավորման հարցին օրենսդրական լուծում տալու նպատակով:

10. Բյուջեի կատարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ապահովելու նպատակով «1064-11001 Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում» միջոցառման «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվություններում արդյունքային ցուցանիշները ներկայացնել ըստ ոլորտների և բացի քանակական ցուցանիշներից ներառել նաև ժամկետային, որակական և այլ ցուցանիշները:

11. Ապահովել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի մոտ ոռոգիոհաճախականությունների օգտագործման դիմաց 2020 թվականին առաջացած 61,453.31 հազ. դրամի չափով տույժի գծով չմարված պարտավորության գանձումը և պետական բյուջե վճարումը:

12. Պահպանել կանոնադրությամբ սահմանված պահանջը ոռոգիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման գործում մրցակցություն ապահովելու վերաբերյալ:

13. Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվող գազամատակարարման համակարգի հիմնական ցուցանիշներում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ին մատակարարված ծավալն արտացոլել նույն աղյուսակի «10.2 Էներգետիկա» տողում՝ նշելով, որ այն «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից բնական գազի ընդհանուր սպառումն է (ԻԻՀ-ից և ՌԴ-ից մատակարարված գազի ծավալների հանրագումարով):

14. Ջրային համակարգերի Վարձակալական պայմանագրի Վարձատուի հետ քննարկել Վարձակալի 2019 թվականի ՊԿԱԾ հետաձգված պարտավորությունը մարված համարելու հարցը, ըստ այդմ ստեղծել խմելու ջրի մատակարարման սակագնի աճի չեզոքացման նախադրյալներ:

15. Կանոնադրության և լիցենզիայի պայմանների պահանջներին համապատասխան վերահսկել փոքր ՀԷԿ-երի գործունեությունը՝ նրանց կողմից ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների չպահպանման փաստերը բացառելու,

ջրօգտագործման սահմանված ծավալներն ու ռեժիմները պահպանելու նպատակով: Փոքր ՀԷԿ-երին տրամադրվող լիցենզիայի պայմանների 12-րդ կետիում կատարել լրացում և «Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,...» բառերից հետո ավելացնել՝ «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի» բառերը:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել են գրավոր առարկություններ և բացատրություններ (կցվում են):

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացի նկատմամբ հաշվեքննության առաջադրանքի շրջանակում կազմված հաշվեքննության արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Առարկություններ

Կարգավորման պարտադիր վճարների վերաբերյալ

Արձանագրությամբ տրվել են «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» 2005 թվականի նոյեմբերի 11-ին ընդունված և 2021 թվականի դեկտեմբերի 1-ից ուժը կորցրած օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներից չբխող և Հանձնաժողովի կողմից իրականացվող հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման գործառույթի մասով ոչ հիմնավոր գնահատականներ: Մասնավորապես, Օրենքի 8-րդ հոդվածից մեջբերելով ընդհանուր համատեքստից կտրված բառակապակցություններ, նախադասություններ, և դրույթները դիտարկելով առանձին-առանձին, տրվել են սուբյեկտիվ մեկնաբանություններ: Այսպես, 8-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» պարբերությունում նշված՝ «հաշվի առնելով» բառակապակցությունը մեկնաբանվել է, թե իբր վճարողների ընդհանուր իրացման շրջանառությունը հաշվարկելիս Հանձնաժողովը կարող էր միաժամանակ հաշվի առնել յուրաքանչյուր վճարողի սակագնի կամ ծառայության վճարի հաշվարկում կանխատեսվող իրացման շրջանառությունը և կիրառել փաստացի տվյալները, ինչն առնվազն

անհասկանալի է: Ավելին, նույնիսկ նշվել է, որ դրա համար անհրաժեշտ էր ունենալ հաստատված մեթոդաբանություն:

Այդ առնչությամբ հարկ է նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական ակտի (բացառությամբ Սահմանադրության) վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տալ ակտը կիրառող պետական կառավարման համակարգի մարմինը՝ նորմատիվ իրավական ակտի դրույթների իմաստի ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում: Մինչդեռ, Օրենքի մասով պարզաբանման անհրաժեշտություն չկա, քանի որ Օրենքում հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման մեխանիզմը հստակ է և ներկայացված է մանրամասն: Հետևաբար, Օրենքով իրացման շրջանառության հաշվարկման մեթոդաբանություն հաստատելու անհրաժեշտություն նույնպես չկա: Մասնավորապես, Օրենքը հստակ ամրագրում էր, որ՝

- 1) հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողներ էին համարվում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար Հանձնաժողովը սահմանում էր կարգավորվող սակագներ, բացառությամբ էլեկտրաէներգետիկական համակարգի մինչև 10 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող արտադրող կայանների,
- 2) հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների ընդհանուր իրացման շրջանառությունը որոշվում էր՝ հաշվի առնելով սակագնի կամ ծառայությունների վճարի հաշվարկում կանխատեսված իրացման շրջանառությունները (կանխատեսվող շրջանառությունից բացի այլ մեծություն կիրառելն ուղղակիորեն կհակասեր Օրենքի դրույթներին), իսկ 8-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» և «գ» պարբերությունները «ա» պարբերության տրամաբանական շարունակությունն են և դրանցով նախատեսված յուրաքանչյուր վճարողի իրացման տեսակարար կշռի և տարեկան դրույքաչափերի հաշվարկման հիմքում ընկած էր սակագնի կամ ծառայության վճարի հաշվարկում կանխատեսված իրացման

շրջանառությունը: Նշվածը հստակ արտացոլված էր նաև Օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելվածում՝ կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման սխեմայում:

Այսպիսով, Հանձնաժողովը հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկն իրականացրել է Օրենքով ամրագրված պահանջներին համապատասխան և Հանձնաժողովի գործողություններում որևէ թերություն առկա չէ:

Այնուամենայնիվ, անդրադառնալով Արձանագրության 4-12-րդ էջերում ներկայացված հաշվարկներին, հարկ է նշել, որ դրանցում տեղ են գտել նաև թվաբանական սխալներ, մասնավորապես՝ 2019 թվականի համար պարտադիր վճարների մասին աղյուսակում՝

- 1) «գործող սակագնի հաշվարկում կանխատեսված» սյունակում էներգետիկայի բնագավառի հասույթի հանրագումարը նշված է 300369,1 մլն դրամ՝ 301113,7 մլն դրամի փոխարեն և ջերմամատակարարման ոլորտի հասույթի հանրագումարը՝ 7712,5 մլն դրամ՝ 7711,5 մլն դրամի փոխարեն և «ընդամենը» տողում հասույթի հանրագումարը՝ 537876,1 մլն դրամ՝ 538620,6 մլն դրամի փոխարեն,
- 2) «2019թ. փաստ» սյունակում էներգետիկայի բնագավառի հասույթի հանրագումարը նշված է 309242,8 մլն դրամ՝ 310025,4 մլն դրամի փոխարեն, նույն սյունակի «ընդամենը» տողում հասույթի հանրագումարը նշված է 567818,1 մլն դրամ՝ 568600,6 մլն դրամի փոխարեն,
- 3) փաստացի ցուցանիշների մասով արտացոլված է «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ-ի ամբողջ հասույթը, մինչդեռ միայն Ամբերդ-ՓՀԷԿ-3-ն է գերազանցում հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարող հանդիսանալու համար սահմանված 10 ՄՎտ դրվածքային հզորության շեմը:

Նույն սխալներն առկա են նաև 2020 թվականի համար պարտադիր վճարների մասին աղյուսակում:

Վերը նշվածն իր ազդեցությունն է թողնում Արձանագրության 4-12-րդ էջերում ներկայացված բոլոր հաշվարկների վրա:

Այս առնչությամբ, հարկ է նաև նշել, որ Օրենքն ընդունվել էր 2005 թվականին և անցած տարիների ընթացքում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում տեղի էին ունեցել զգալի զարգացումներ, որի արդյունքում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ կարգավորվող ոչ բոլոր անձանց համար էր Հանձնաժողովը սահանում սակագներ, որի արդյունքում վերջիններս դուրս էին մնում կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկից՝ չնայած նշված անձանց մասով Հանձնաժողովն իրականացնում էր և ներկայումս էլ իրականացնում է համապատասխան գործառույթներ: Մասնավորապես, հեռահաղորդակցության բնագավառում Հանձնաժողովն իրականացնում է ամբողջական կարգավորում, սակայն նշված շուկայում առկա մրցակցության պայմաններում սակագների կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է և գրեթե չի իրականացվում: Բացի այդ, «Էներգետիկայի մասին» օրենքում կատարված փոփոխությունների շրջանակում առաջիկա տարիներին նախատեսվում է էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջությամբ կարգավորվող մոդելից աստիճանական անցում կատարել մրցակցային մոդելի, որի պարագայում ի հայտ կգան չկարգավորվող գներով գործող շուկայի նոր մասնակիցներ: Արդյունքում, Հանձնաժողովի ռեսուրսներն օգտագործվում են նաև սակագնային կարգավորումից դուրս գտնվող տնտեսվարողների մասով, մինչդեռ վերջիններս Օրենքի շրջանակում չէին վճարում հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ: Նշվածի արդյունքում առաջացել էր Օրենքի վերանայման անհրաժեշտություն:

Ուստի, Հանձնաժողովը դեռևս 2019 թվականից նախաձեռնել էր Օրենքում փոփոխությունների մշակում, որն էլ ներկայացվել էր ՀՀ կառավարություն՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով: Արդյունքում, 2021 թվականի նոյեմբերի 18-ին ընդունվել և դեկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» նոր օրենքը, համաձայն որի վերանայվել է կարգավորման պարտադիր վճար վճարողների ցանկը և վճարների հաշվարկման մոտեցումները: Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողներ են համարվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում գործունեություն իրականացնող խոշոր

ընկերությունները՝ անկախ սակագնային կարգավորման ենթակա լինելու հանգամանքից, իսկ կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկման համար էլ հիմք է ընդունվում հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճար վճարողների՝ կարգավորվող ոլորտում գործունեության հաշվետու տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի իրացման շրջանառությունը:

Հետևաբար, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման գործառույթի մասով Արձանագրությամբ բարձրացված խնդիրները ոչ թե ենթակա էին լուծման Օրենքի շրջանակում, այլ կարող էին իրականացվել միայն Օրենքի փոփոխությունների արդյունքում, ինչն էլ իրականացվել է Հանձնաժողովի նախաձեռնությամբ և 2022 թվականի համար հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներն էլ արդեն իսկ հաշվարկվել ու սահմանվել են նոր օրենքի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի կողմից 2019 և 2020 թվականներին տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների վերաբերյալ

- Արձանագրությամբ նշված է լիցենզիաների և **թույլտվությունների** տրամադրման պետական տուրքի մուտքերի չափերի մասին տեղեկություն:

Մինչդեռ, Հանձնաժողովի կողմից կարգավորվող՝ **հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում իրականացող գործունեության համար** պետական տուրքեր գանձվում են **միայն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիաների դեպքում:**

- Արձանագրությամբ նշված է, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 10-րդ կետի 1.1 ենթակետով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման համար **պարտադիր է** առաջնորդվել աղյուսակում տառերով նշված ծածկագրերի հապավումներով:

Այս առումով, պետք է նշել, որ նման պարտադիր պահանջ օրենքով նախատեսված չէ, քանի որ օրենքի վերոնշյալ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ «Ո» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տալու համար

Ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգման իրականացումն ամրագրված է որպես **իրավասություն, այլ ոչ թե պարտավորություն**:

- Արձանագրությամբ նշված է, որ «ԷՅԴԻՆԵՏ» ՍՊԸ-ին Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ տրամադրվել է լիցենզիա **ՀՀ Շիրակի մարզի Զիթանքով, Մարալիկ և Աշոցք համայնքներում** հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման նպատակով:

Մինչդեռ, այն իրականությանը չի համապատասխանում, քանի որ նշված ընկերությանը Հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 3-ի N195Ա որոշմամբ տրամադրվել է լիցենզիա՝ **Շիրակի մարզում** հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման նպատակով: Նշված իրավական հիմքն ամրագրված է «Պետական տուրքի մասին» օրենքով, որի համաձայն՝ Հանձնաժողովը հեռահաղորդակցության բնագավառում լիցենզիա տրամադրում է ըստ մարզ(եր)ում, Երևան քաղաքում, կամ Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, այլ ոչ թե մարզային համայնքներում, գործունեության իրականացման նպատակով:

- Հաշվեքննությամբ արձանագրված՝ լիցենզիաների (այդ թվում՝ «ԷՅԴԻՆԵՏ» ՍՊԸ-ի) փաթեթներում մասնագիտական որակավորման փաստաթղթերի բացակայության և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված՝ ցանցի լիցենզիա տրամադրելու կարգը սահմանելիս Հանձնաժողովի կողմից դիմողի տեխնիկական որակավորման պահանջը հաշվի առնելու վերաբերյալ դիտարկումների մասով անհրաժեշտ է նշել հետևյալը.

Ինչպես նշվեց, «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ լիցենզիա տալու համար հայտատուի մասնագիտական որակավորման ստուգման **պարտադիր** պահանջ սահմանված չէ և այն ամրագրված է, որպես **իրավասություն**: Այնուամենայնիվ, լիցենզիա տրամադրելու կարգը սահմանելիս Հանձնաժողովի կողմից դիմողի տեխնիկական որակավորման պահանջի ամրագրման մասով Հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի N272Ն որոշմամբ հաստատված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման կարգի համաձայն՝ լիցենզիայի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթուղթ է հանդիսանում կապի ոլորտում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված հանրային էլեկտրոնային

հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագիծը կամ հայտատուի կողմից մշակված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նկարագիրը, որը պետք է հայտատուի կողմից ներկայացվի Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 18-ի N30Ն որոշման պահանջների համաձայն: Ընդ որում, նշված որոշմամբ սահմանված է վերոնշյալ տեխնիկական նախագծերում և նկարագրերում ընդգրկվող տեխնիկական բնութագրեր և տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ցանկը: Այդուհանդերձ, նկատի ունենալով, որ հեռահաղորդակցության բնագավառի զարգացման միտումներով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել լրամշակել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքը՝ (որն ընդունվել է դեռևս 2005 թվականին)՝ խնդրո առարկա հարցի մասով տարընկալումներից խուսափելու նպատակով, օրենքի լրամշակման շրջանակում նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություններ:

- Արձանագրությամբ նշվում է, որ որոշ հայտատուների կողմից ստորագրված և կնքված չեն հիմնական կայանի, տեխնիկական նկարագրի և գործարար ծրագրի փաստաթղթերը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, Հանձնաժողովն էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորումն իրականացնում է Հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի N272Ն որոշմամբ հաստատված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման կարգի համաձայն: Նշված կարգով հստակ ամրագրված են լիցենզիայի հայտի (դիմումի) ներկայացման պահանջները, որով նախատեսված է միայն լիցենզիա ստանալու դիմումի ստորագրման պահանջ և դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի (նախագիծ, նկարագիր, գործարար ծրագիր) ստորագրված կամ կնքված լինելու պահանջ նախատեսված չէ: Ընդ որում, ՀՀ օրենսդրության համաձայն («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքներ)՝ տնտեսվարողի կողմից կնիք ունենալու պարտադիր պահանջ նախատեսված չէ: Ինչ վերաբերում է Արձանագրության մեջ նշված «հիմնական կայանի փաստաթուղթ» բառակապակցությանը, ապա այն անհասկանալի է և նման հասկացություն ու փաստաթղթի ներկայացման պահանջ սահմանված չէ:

Ջրային ոլորտի («Ջրառ» ՓԲԸ) լիցենզավորման վերաբերյալ

Նախևառաջ հարկ է նշել, որ ՀՀ-ում գործունեության տարբեր ոլորտներում առաջացող լիցենզավորման հարաբերություններն ամբողջացնող ու համապարփակ կարգավորող նորմատիվ իրավական ակտը «Լիցենզավորման մասին» օրենքն է: Նշված օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի աղյուսակում:

Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 8.1. «Ջրային ոլորտ» բաժնում նախատեսում է միայն խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցումը, իսկ որպես լիցենզավորող մարմին նշված է Հանձնաժողովը. ընդհանրապես չկա որևէ նշում ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման մասով: Բացի այդ, «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածը, որը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը, 7.1 «Ջրային բնագավառ» բաժնում պետական տուրքի դրույքաչափ է նախատեսում միայն խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար, ու կրկին ոռոգման ջրի մատակարարման համար պետական տուրքի դրույքաչափ նախատեսված չէ: Ընդ որում, «Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ ու 3-րդ հոդվածներից բխում է, որ պետական տուրքը սահմանված է միայն այն ծառայությունների կամ գործողությունների համար, որոնք սահմանված են հենց այդ օրենքով, ինչից հետևում է, որ այլ օրենքներով սահմանված ծառայությունները պետական տուրքի գանձման օբյեկտ չեն, եթե չեն արտացոլվում «Պետական տուրքի մասին» օրենքով: Այլ կերպ, ստացվում է, որ նույնիսկ եթե տվյալ դեպքում ոռոգման ջրամատակարարման ծառայությունը համարվի լիցենզավորման ենթակա ծառայություն, ապա դրա դիմաց չի կարող գանձվել պետական տուրքի գումար, ինչը պարզապես խախտում է պետական տուրքի ինստիտուտի նախատեսման տրամաբանությունն ու նպատակները:

Ինչ վերաբերում է Արձանագրության մեջ կատարված դիտողությանն առ այն, որ ներկայացվող իրավիճակում Հանձնաժողովը հայտի դեպքում կարող է տվյալ պարագայում կիրառել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված՝ իրավական կոլիզիայի լուծման կանոնը և արդյունքում հիմք ընդունել ՀՀ ջրային օրենսգրքի համապատասխան կարգավորումը, ապա նախ անհրաժեշտ է փաստել, որ ո՛չ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի իմաստով, ո՛չ նույն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի իմաստով, օրենսգիրքը չի համարվում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ, քան օրենքը, բացառությամբ այն օրենսգրքերի, որոնք, ՀՀ սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, ունեն սահմանադրական օրենքի կարգավիճակ: Ընդ որում, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածն «օրենսգիրք» հասկացության ներքո ընդամենը նկատի է ունենում այն օրենքը, որը միավորում է իրավունքի ամբողջ ճյուղի կամ դրա առանձին մասի՝ համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր կամ հիմնական նորմերը:

Տվյալ դեպքում ՀՀ ջրային օրենսգիրքը չունի սահմանադրական օրենքի կարգավիճակ, հետևաբար «Լիցենզավորման մասին» օրենքի նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժ ունենալու մասով Արձանագրության մեջ ընդունված կանխադրույթը հիմնավոր չէ:

Հարկ է նաև փաստել, որ ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումը նախատեսված է ոչ թե ՀՀ ջրային օրենսգրքի՝ որպես նորմատիվ իրավական ակտի հիմնական մասում, այլ անցումային դրույթները նախատեսող հոդվածում: Նշված նորմը նախատեսվել է «Հայաստանի հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-108-Ն օրենքի 27-րդ հոդվածով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 22-ին):

Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի (ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին) 13-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսվում են նորմատիվ ակտի անցումային դրույթների բովանդակությանը ներկայացվող պահանջները: Անցումային դրույթներին ներկայացվող պահանջներ է պարունակում նաև մինչև

2018 թվականի ապրիլի 7-ը գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասը:

Նշված կարգավորումների բովանդակության համատեքստում ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 8-րդ մասի՝ 2020 թվականի հունվարի 1-ից հետո ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման լիցենզավորման առանձնահատկությունների մասով նախատեսված կարգավորումը դիտարկելու պարագայում կարող ենք եզրահանգել, որ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետք է լիարժեք հիմքեր ստեղծվեին ոռոգման ոլորտում լիցենզավորման գործունեությունը լիարժեք իրականացնելու համար, մինչդեռ, ինչպես նշվեց, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների և պետական տուրքի մասով չեն նախատեսվել համապատասխան իրավական հիմքեր:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի համոզմամբ, 2020 թվականի հունվարի 1-ից սկսած նշված անցումային դրույթի կիրառումը՝ որպես ոռոգման ջրամատակարարման ոլորտում լիցենզավորման հատուկ կարգավորում, խնդրահարույց է ոչ միայն անցումային դրույթի նախատեսման նպատակի համատեքստում, այլև նշված նորմն ընդհանրապես որպես հատուկ կարգավորող նորմ դիտարկելու առումով: Հանձնաժողովը գտնում է, որ 2020 թվականի հունվարի 1-ից հետո պետք է ՀՀ ջրային օրենսգրքի հիմնական մասում նվազագույնը նախատեսվեր հստակ նորմ առ այն, որ ոռոգման ջրամատակարարման ոլորտում Հանձնաժողովը՝ որպես կարգավորող, հանդես է գալիս որպես լիցենզավորող պետական մարմին, մինչդեռ տվյալ դեպքում նշված օրենսգրքի հատուկ մասում նման դրույթ չկա: **Հետևում է, որ նման պայմաններում կիրառման է ենթակա «Լիցենզավորման մասին» օրենքը, որը, ինչպես ընդգծվեց, ընդհանրապես չի նախատեսում ոռոգման ջրամատակարարումը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:**

Ի հավելումն վերը շարադրվածի՝ նշենք, որ Հանձնաժողովը նշված խնդիրը բազմիցս բարձրացրել է նաև իրավասու մարմիններին ուղղված գրություններով՝ առաջարկելով օրենսդրական նախաձեռնության շրջանակում

համապատասխան փոփոխությունների միջոցով լուծել կարգավորման անհստակությունները:

Միաժամանակ, Արձանագրության 19-րդ էջում առկա «Նշենք, որ «Ջրառ» ՓԲԸ-ն 2020 թվականին սպառողներին մատակարարել (վաճառել) է 902.2 մլն խմ ոռոգման ջուր (հասույթը կազմել է 1 525 049.0 հազ դրամ) ...» ձևակերպման առնչությամբ հայտնում ենք, որ «Ջրառ» ՓԲԸ-ից ստացված հաշվետվությունների համաձայն՝ 2020 թվականի արդյունքներով մատակարարված ոռոգման ջրի դիմաց ձևավորված ապրանքային արտադրանքը կազմել է 1 517 433.2 հազ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), ինչը հրապարակված է նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Սակագների սահմանման վերաբերյալ

1. Ոռոգման ջրամատակարարման ոլորտ

Ոռոգման ջրամատակարարման սակագների վերանայման առնչությամբ Արձանագրությամբ կատարված գործոնային վերլուծությունը թերի է և կարծես միտում ունի ընդգծելու, թե իբր ոռոգման ջրի սակագները Հանձնաժողովի կողմից կարող էին նվազեցվել, ինչը, սակայն, չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից ոռոգման ջրի վաճառքի սակագների վրա, ի թիվս ջրամատակարարման ծավալների փոփոխության, զգալի ազդեցություն ունեն նաև այլ գործոններ, որոնց բոլորի համալիր վերլուծության արդյունքում միայն կարելի է ճիշտ եզրահանգում անել: Այնուամենայնիվ, խոշորացված գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը՝

- 1) 2007-2020թթ. էլեկտրական էներգիայի սակագներն աճել են շուրջ 2,5 անգամ, ինչի արդյունքում, չնայած մեխանիկական եղանակով ջրամատակարարման ծավալի կրճատմանը, էլեկտրական էներգիայի ծախսի կրճատում, ըստ էության, տեղի չի ունեցել,
- 2) «Ջրառ» ՓԲԸ-ի գործող սակագների հաշվարկներում միջին ամսական աշխատավարձի մեծությունը կազմում է 80000 դրամ, մինչդեռ հանրային ծառայությունների կարգավորվող մյուս ոլորտներում՝ մասնավորապես էլեկտրաէներգետիկական համակարգում, միջին ամսական բազիսային

աշխատավարձը ներկայիս սակագների հաշվարկներում կազմում է 220000 դրամ (2,75 անգամ ավելի), ինչը զգալիորեն ավելացնում է նշված ծախսը:

- 3) ոռոգման համակարգում իրականացված ներդրումները, որոնց մասին նշված է Արձանագրության 21-րդ էջում, սակագների վերանայման դեպքում ևս պետք է հաշվի առնվեն սակագների հաշվարկներում՝ փոխհատուցվելով մաշվածության ու շահույթի միջոցով կամ ՀՀ կառավարության երաշխավորմամբ ստացված արտոնյալ վարկերի հաշվին իրականացվելու դեպքում՝ վերջիններիս սպասարկման (տոկոսավճարներ) և մարման ծախսերը հաշվարկներում ներառելու միջոցով, որոնք նույնպես բացասական ազդեցություն ունեն սակագների վրա:

Ավելին, ՀՀ պետական բյուջեից «Ջրառ» ՓԲԸ-ի սուբսիդավորելու հանգամանքը նույնպես վկայում է ոռոգման ջրի սակագների ծախսաձածկող չլինելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով բոլոր գործոններով պայմանավորված սակագների հնարավոր բարձրացման գնահատականը՝ Հանձնաժողովը ոռոգման ջրի սակագների վերանայման գործընթաց սեփական նախաձեռնությամբ չի սկսել:

Ինչ վերաբերում է Արձանագրության «Ոռոգման ջրամատակարարման ոլորտ» բաժնի վերջում (էջ 22) արտացոլված եզրակացությանը՝ Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ սակագների վերանայման իրեն վերապահված գործառույթը չիրացնելուն, ապա որևէ օրենքի կամ իրավական ակտի պահանջի խախտում առկա չէ, քանի որ «Ջրային օրենսգրքի» 79¹ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ կարգավորող Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ սակագնի վերանայումը իրավասություն է և ոչ թե պարտավորություն:

2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ոլորտ

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում իրականացվող սակագնային քաղաքականության մասով Արձանագրությամբ ամրագրված եզրահանգումները չեն բխում գործող իրավակարգավորումներից և որոշ դեպքերում առնչություն չունեն Հանձնաժողովի կողմից իրականացման ենթակա սակագնային քաղաքականության հետ: Մասնավորապես, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)

ծառայությունների մատուցման 15 տարվա (2017-2031թթ) բազիսային սակագները և դրանց ճշգրտման մեխանիզմները ձևավորվել են ՀՀ կառավարության կազմակերպած միջազգային մրցույթի արդյունքում: Միևնույն ժամանակ, «Վեոլիա Օ-Կոնպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության, նրա կողմից հիմնադրված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարության (ի դեմս ջրային կոմիտեի) միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) ընդհանուր պայմանների 9-րդ հոդվածի 9.1(2) կետով ամրագրվել է, որ եթե Հանձնաժողովը չհաստատի հայտատուին ուղարկված մրցակցային փաթեթում ներառված լիցենզիայով սահմանված պայմաններով ճշգրտվող բազիսային սակագինը կամ փոխվի սակագնի հաշվարկի մեթոդոլոգիան, որի արդյունքում վարձակալի («Վեոլիա Ջուր» ՓԲԸ) համար չի հաստատվի լիցենզիայի պայմանների համաձայն ճշգրտված սակագինը, ապա վարձատուն (ՀՀ կառավարությունը) կփոխհատուցի վարձակալին սակագների միջև եղած տարբերությունը, իսկ չկատարելը կդիտվի որպես վարձատուի կողմից Վարձակալության պայմանագրի վաղաժամկետ չպատճառաբանված դադարեցում՝ ըստ Վարձակալության պայմանագրի ընդհանուր պայմանների 3.8.3 հոդվածի, որի դեպքում վարձակալը փոխհատուցում ստանալու իրավունք ունի:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ կառավարության կազմակերպած մրցույթի արդյունքում վարձակալության 15 տարիների համար ձևավորված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) բազիսային սակագները և Վարձակալության պայմանագրի վերը նշված ընդհանուր պայմանների 9-րդ հոդվածի 9.1(2) կետը, Հանձնաժողովը 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ հաստատել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանները՝ վերջինիս №3 հավելվածում նույնությամբ ամրագրելով մրցույթի արդյունքում ձևավորված 15 տարիների բազիսային սակագները և մրցակցային փաթեթում ներառված սակագների ճշգրտման մեխանիզմները:

Համաձայն սակագների նշված ճշգրտման մեխանիզմների՝ Վարձակալության պայմանագրի 1-ին տարվա (2017 թվական) համար նույնությամբ սահմանվել են մրցույթի արդյունքում ձևավորված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման

(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները, իսկ Վարձակալության պայմանագրի 2-րդ տարվանից սկսած (2018 թվական) սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են պարտադիր ճշգրտման՝ հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխությունը, սղաճը և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը, ինչպես նաև ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցումը: Հատկանշական է, որ գործող իրավակարգավորումներում, այդ թվում՝ թե Վարձակալության պայմանագրում, թե ընկերությանը տրամադրված Լիցենզիայի պայմաններում սակագների ճշգրտման հաշվարկներում ներառելու նպատակով փաստացի ջրամատակարարման ծավալների մոնիթորինգի իրականացման վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ: Ուստի, Վարձակալության պայմանագրի (այդ թվում՝ ընդհանուր պայմանների 9-րդ հոդվածը) և Լիցենզիայի պայմանների դրույթներին ընկերության կողմից խստագույնս հետամուտ լինելու դեպքում Հանձնաժողովն, ըստ էության, գրեթե նույնությամբ պետք է հաստատեր «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից վարձակալության 2-րդ և հետագա տարիների համար ներկայացված սակագները: Սակայն, ընկերության հետ ունեցած քննարկումների արդյունքում հնարավոր է եղել իրականացնել փաստացի ջրամատակարարման ծավալների մոնիթորինգ՝ ներկայումս իրականացվող ձևաչափով՝ այն է՝ առավել խնդրահարույց բաժանորդների մոտ հայտնաբերված խախտումների մասով հաշվարկված ծավալները միայն ներառել սակագների հաշվարկներում:

Ընդ որում, ի սկզբանե, 2018 թվականի սակագների ճշգրտման գործընթացի ժամանակ (2017 թվական) Հանձնաժողովը նախաձեռնել էր քննարկումներ ընկերության հետ՝ նպատակ ունենալով համատեղ ստորագրվող արձանագրությամբ ամրագրել մոնիթորինգի անցկացման և արդյունքների ամփոփման ընթացակարգ: Հանձնաժողովն առաջարկել է պատահական ընտրանքով կազմավորված ցանկով իրականացված մոնիթորինգի արդյունքները տարածել ամբողջ ջրամատակարարման ծավալի վրա, ինչին ընկերությունն առարկել է, նշված արձանագրությունը չի ստորագրվել և արդյունքում փոխադարձ համաձայնությամբ կիրառվում է գործող ընթացակարգը: Հետևաբար, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի փաստացի ջրամատակարարման

ծավալների մոնիթորինգի մեթոդաբանություն սահմանելու և կորուստների կրճատման մասին Արձանագրությամբ կատարված եզրակացությունները չեն բխում գործող իրավակարգավորումներից:

Ինչ վերաբերում է ոչ բնակիչ-բաժանորդների մոտ մոնիթորինգի անցկացման պրակտիկային, ապա հարկ է նշել, որ այդ, թեև դրանց քանակը զգալիորեն զիջում է բնակիչ-բաժանորդների քանակին, այնուամենայնիվ, դրանց մոտ հայտնաբերված խախտումների արդյունքներով հաշվառվող ջրի ծավալը մի քանի անգամ գերազանցում է բնակիչ-բաժանորդների մոտ հայտնաբերվող ջրի ծավալին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բնակիչ-բաժանորդների մոտ խախտումներ հայտնաբերելու դեպքում մանրաձախ ջրամատակարարման ծավալի հաշվարկն իրականացվում է 90 օրվա համար, իսկ բնակիչ-բաժանորդների մոտ՝ 30 օրվա համար: Միևնույն ժամանակ, ոչ բնակիչ-բաժանորդների մոտ մոնիթորինգի անցկացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հանձնաժողովի և ՀՀ ջրային կոմիտեի ռեսուրսները սահմանափակ են և այդ սահմանափակ ռեսուրսներով և ժամկետներում փորձ է արվում հնարավորինս մեծ ծավալի այցելություններ ունենալ և հնարավորինս մեծ ծավալի ջրաքանակ հայտնաբերել:

Անդրադառնալով 2019 թվականի համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագները սպառողների համար անփոփոխ պահպանելու մասին Արձանագրությամբ կատարված դատողություններին՝ հարկ է նշել, որ սակագների աճի տեղափոխումը այլ տարիներ նախատեսված է Լիցենզիայի պայմաններով և կարող է իրականացվել ընկերության համաձայնությամբ: Իսկ 2018 թվականին ստորագրված թիվ 8 համաձայնագիրը ոչ միայն նպատակ է ունեցել 2019 թվականի համար նախատեսվող սակագնի աճը տեղափոխվել 2025 թվական, այլ նաև վարձակալի կողմից պարտադիր կապիտալ ծախսերի իրականացումը՝ այն հիմնավորմամբ, որ սակագների չբարձրացմամբ պայմանավորված ընկերությունը չէր կարող հավաքագրել այնպիսի եկամուտ, որը կբավարարեր նաև համապատասխան չափով կապիտալ ծախսերի իրականացմանը: Այդպիսով, նպատակ չի դրվել նվազեցնել Վարձակալության պայմանագրով

նախատեսված կապիտալ ծախսերի ընդհանուր մեծությունը, այլ տեղի է ունեցել փոփոխություն տարիների միջև: Ավելին, հաշվի առնելով 2019 թվականի համար Վարձակալի ստանձնած պարտավորությունների կատարումը, Վարձատուն ստանձնել է տվյալ տարվա համար լրացուցիչ աշխատանքների իրականացում, ինչը ավելացնում է խմելու ջրի համակարգում կապիտալ բնույթի աշխատանքների ծավալը՝ դրական ազդեցություն թողնելով ծառայությունների որակի վրա:

3. *Ջրահեռացման ոլորտ*

Ինչպես արդեն նշվեց, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 15 տարվա բազիսային սակագները և դրանց ճշգրտման մեխանիզմները ձևավորվել են ՀՀ կառավարության կազմակերպած միջազգային մրցույթի արդյունքում, որոնք ենթակա էին ճշգրտման վերը նշված 4 գործոններով միայն: Այսպիսով, Հանձնաժողովը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկ չի իրականացնում: Ընդ որում, բազիսային սակագների տարրանջատումն ըստ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների իրականացվում է ջրային համակարգերը վարձակալության հանձնելու նպատակով կազմակերպված մրցույթի փաստաթղթերում և այնուհետև՝ Հանձնաժողովի կողմից ընկերությանը տրված Լիցենզիայի պայմաններում ամրագրված սկզբունքների համաձայն: Այն է՝ բազիսային սակագների միայն 15%-ն է վերագրվում ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններին: Ըստ էության, նշված սկզբունքը հաշվի առնելով է նաև ընկերությունը վարձակալության մրցույթի ժամանակ ներկայացրել՝ 15 տարվա բազիսային սակագների իր առաջարկը:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ կեղտաջրերի մաքրման ծառայությունը սահմանված է ջրահեռացման ծառայության հետ միաժամանակ, այլ ոչ թե որպես առանձին ծառայություն, ինչն էլ իր արտացոլումն է գտել Վարձակալության պայմանագրին համապատասխան «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին

տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմաններում:

Հետևաբար հարկ է նշել, որ Արձանագրությամբ ամրագրված այն եզրահանգումը, թե Հանձնաժողովի սահմանած սակագինը չնայած ջրահեռացման (կեղտաջրերի) մաքրման մասին է, մինչդեռ կապ չունի մաքրման հետ և չի կատարում իր ֆինանսատնտեսական գործառույթը, չի բխում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառվող սակագնային կարգավորումներից և, ըստ էության, խնդիրը ամբողջապես ուսումնասիրված չլինելու արդյունք է:

Միաժամանակ, Արձանագրության մեջ բարձրացված են հարցեր (այդ թվում՝ Աէրացիայի ԿՄԿ-ի հանձման հետ կապված), որոնք Հանձնաժողովի իրավասությունների տիրույթում չեն և Վարձակալության պայմանագրի կողմերի միջև քննարկման ենթակա հարցեր են:

Փոքր հիդրոէլեկտրակայանների վերաբերյալ

Լիցենզիայի պայմանների ենթադրյալ խախտումը չկանխելու մասով Հանձնաժողովի կողմից անգործություն դրսևորելու վերաբերյալ եզրահանգման առնչությամբ՝

Հաշվեքննիչ պալատն Արձանագրության մեջ նշել է, որ ներկայացված ՓՀԷԿ-երն արտադրել են էլեկտրաէներգիա ջրօգտագործման թույլտվությամբ տվյալ ամիսների կամ ժամանակահատվածի համար չնախատեսված ամիսներին՝ խախտելով ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածը: Այնուհետև մեջբերելով լիցենզիայի պայմանների 12-րդ, 28-րդ կետերը՝ եզրահանգել է, որ Հանձնաժողովը, իր տրամադրության տակ ունենալով ՓՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվությունները և էլեկտրաէներգիայի արտադրության հաշվետվությունները, չի վերահսկել լիցենզավորված գործունեությունն ու որևէ քայլ չի ձեռնարկել լիցենզավորված անձանց (ՓՀԷԿ-երի) կողմից լիցենզիայի պայմանների 12-րդ կետի խախտումը կանխելու ուղղությամբ: **Հաճնաժողովը հիմնավոր չի համարում Հաշվեքննիչ պալատի նշված եզրահանգումը՝ հետևյալ հիմնավորումներով.**

Հարկ է ընդգծել, որ «Էներգետիկայի մասին» օրենքին համապատասխան՝ Հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի իրավասության դաշտում գտնվում է

էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեությունը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն, իսկ ինչ վերաբերում է ջրօգտագործման առնչությամբ ծավալվող իրավահարաբերություններին, ապա դրանք գտնվում են այլ պետական մարմինների իրավասության ու հսկողության տիրույթում: Այլ կերպ, լիցենզավորվող սուբյեկտի գործունեությունը Հանձնաժողովի իրավագործությունների դաշտում չի գտնվում ու չի կարող գտնվել բացարձակապես և բոլոր առումներով, այլ միայն այնքանով կամ այն տեսանկյունից, որքանով առնչվում է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզավորմանը և միաժամանակ գտնվում է Հանձնաժողովի՝ օրենքով ամրագրված իրավասությունների տիրույթում: Մասնավորապես, ՀՀ ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածին համապատասխան, ջրօգտագործման թույլտվությունը տրամադրում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝ ներկայացված հայտի հիման վրա:

Ընդ որում, լիազորությունների նման բաշխումն ու տարանջատումն ինքնանպատակ չէ, քանի որ հակառակ պարագայում լիազորությունների համադրման արդյունքում կարող է առաջանալ իրավական խառնաշփոթ՝ կապված միևնույն գործունեության (ջրօգտագործման) նկատմամբ պետական հսկողության, միևնույն արարքի (ջրօգտագործման կանոնների ենթադրյալ խախտման) նկատմամբ տարբեր պետական մարմինների կողմից պատասխանատվության ենթարկելու կամ կրկնակի պատասխանատվության հարցերի հետ: Այսպես, տեղին է նաև նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 62-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում ջրառի, ջրամատակարարման և ջրօգտագործման կանոնները խախտելու համար, իսկ նույն օրենսգրքի 242-րդ հոդվածը ջրային ռեսուրսների պահպանության մասով նշված կանոնների խախտմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող ու տույժեր նշանակող իրավասու մարմին է ճանաչում շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմին: Ինչպես երևում է, քննարկվող հարաբերություններում առաջացող իրավախախտումների մասով Հանձնաժողովը որևէ անելիք չունի, և ավելին, նույնը կարող ենք եզրահանգել նաև «էներգետիկայի մասին» օրենքի 7-րդ գլխի («Պատասխանատվության միջոցները») կարգավորումներից:

Վերը շարադրվածն ուղղակիորեն բխում է ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասից, որն ամրագրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունը՝ կատարելու միայն Սահմանադրությամբ կամ օրենքներով լիազորված գործողություններ: Պետական մարմինները չեն կարող գործել իրենց լիազորություններից դուրս: Պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների՝ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում գործելու պարտականությունը արձանագրվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում (տե՛ս, օրինակ, 2016 թվականի հուլիսի 8-ի ՍԴՈ-1291 որոշումը):

Բացի այդ, եթե առաջնորդվենք Արձանագրության մեջ ներկայացված տրամաբանությամբ, ապա այդ պարագայում Հանձնաժողովի վրա կարող են դրվել, օրինակ, լիցենզավորված սուբյեկտի գործունեության համար անհրաժեշտ անշարժ գույքի ընթացիկ պահպանման պարտականության ստուգումը՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան, լիցենզիան տրամադրելիս հիմք ընդունված հողամասերի օգտագործման սահմանված ռեժիմների պահպանումը՝ հողային օրենսդրությանը համապատասխան, և այլն:

Ավելին, անհրաժեշտ է նշել, որ արձարծվող հարցի մասով նույնիսկ չունենալով անմիջական պարտականություն՝ Հանձնաժողովը, այնուամենայնիվ, դրսևորել է պրոակտիվ ու շահագրգիռ վարքագիծ: Այսպես, ՀՀ շրջակա միջավայրի նախարար է. Գրիգորյանին ուղղված Հանձնաժողովի անդամ Ս. Աղինյանի 2019 թվականի օգոստոսի 2-ի №ՍԱ/2.3-56/1863 գրությանը կից ներկայացվել է այն ՓՀԷԿ-երի ցանկը, որում, համաձայն «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված ամսական տեղեկանքների, գրանցվել են էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմաններում ամրագրված հզորությունների գերազանցումներ, որոնց պատճառ կարող են հանդիսանալ ջրօգտագործման թույլտվություններով սահմանված պայմաններից հնարավոր շեղումները: Ի պատասխան նշված գրության՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից հայտնվել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 3-ի N

68 որոշման՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից յուրաքանչյուր հաջորդ ամիս շրջակա միջավայրի նախարարություն է ներկայացվում նախորդ ամսվա ընթացքում հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի վերաբերյալ հաշվետվություն, ինչի հիման վրա հաշվարկվում է ջրի հոսքի մեծությունը՝ տվյալ ամսվա համար: Հաշվարկների արդյունքում հայտնաբերված, ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակից ավել ջրառի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով ուղարկվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին: Նշվել է նաև, որ ներկայացված ցանկում ընդգրկված ՓՀԷԿ-երի միջոցով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմաններում ամրագրված հզորությունների գերազանցումները տեղի են ունեցել օրական կտրվածքով, ինչը չի կարող արտահայտել ամբողջ ամսվա ընթացքում օգտագործված ջրի ծավալի իրական պատկերը:

Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և օգտագործման վերաբերյալ

- Արձանագրությամբ նշված է, որ 800ՄՀց և 1800ՄՀց տիրույթների համապատասխան հատվածների մրցույթի կազմակերպման տեղեկանք-հիմնավորման մեջ Հանձնաժողովը ձևավորել է եզրակացություն, ըստ որի «... հաշվի առնելով ՀՀ հանրային շարժական կապի ծառայությունների փոքր շուկայի ներկայիս հագեցած և բարձր մրցակցային իրավիճակը, Հանձնաժողովը թե ներկայումս, և թե ապագայում նպատակահարմար չի համարում 4-րդ օպերատորի մուտքը հանրային շարժական կապի ծառայությունների շուկա», սակայն չի ներկայացվել որևէ իրավական հիմք, որը կփաստեր տվյալ դիրքորշումը: Բացի այդ, նշված է նաև, որ ուսումնասիրությամբ պարզվել է, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից առաջարկված՝ 800ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները Հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 10-ի №487Ն որոշմամբ մինչև մրցույթային գործընթացների իրականացումը հաստատված ռադիոհաճախականությունների տիրույթում չեն եղել, ինչը սահմանափակել է այլ տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը նախատեսվող մրցույթին՝ նման

նադիոհաճախականությունների մասին տեղեկացված չլինելու հետևանքով, և փաստորեն չի ապահովվել Հանձնաժողովի կանոնադրության՝ նրա լիազորություններին վերաբերող 3-րդ բաժնի 4-րդ կետի «ե» ենթակետի պահանջն՝ ըստ որի Հանձնաժողովն «... ապահովում է արդար և արդյունավետ մրցակցություն մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում»:

Այս կապակցությամբ, նշենք հետևյալը.

Հանձնաժողովի կողմից մրցույթների միջոցով նադիոհաճախականությունների տրամադրումը ամենևին պայմանավորված չէ Հանձնաժողովի 10.09.2008 թվականի №487Ն որոշմամբ հաստատված՝ մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրվող նադիոհաճախականությունների ցանկում որևէ նադիոհաճախականության ներառված լինելու կամ այդ ցանկից նադիոհաճախականության բացակայելու հանգամանքով, այլ բխում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ նադիոհաճախականությունների, որպես սահմանափակ ռեսուրսի, մրցութային հիմունքներով տրամադրելու պահանջներից, ինչպես նաև՝ նույնիսկ ռեսուրսի սահմանափակության բացակայության պայմաններում՝ այն մրցութային հիմունքով տրամադրելու իրավասությունից:

Հանձնաժողովի 10.09.2008 թվականի №487Ն որոշմամբ հաստատված ցանկում որոշակի նադիոհաճախականությունների ներառումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 28.02.2008 թվականի №71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի համաձայն դրանց օգտագործման համար նախատեսված է մի քանի նպատակ, ուստի Հանձնաժողովի տնօրինման ներքո գտնվող (այդ թվում՝ կառավարական օգտագործողների հետ համատեղ օգտագործվող) նադիոհաճախականությունների տիրույթների ներառումը մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրվող նադիոհաճախականությունների ցանկում սահմանափակում է Հանձնաժողովի և իրավասու մարմնի կողմից այլ ծառայությունների օգտագործման համար դրանց ազատ տրամադրումը: Որպես օրինակ, նադիոհաճախականությունների 790-862 ՄՀց տիրույթը, համաձայն վերոնշյալ աղյուսակի, նախատեսված է ֆիքսված, շարժական, նադիոհեռարձակման և օդային նադիոնավիգացիոն նպատակներով ծառայությունների կողմից օգտագործման համար: Ընդ որում, եթե շարժական կապի ծառայության համար այդ տիրույթը համարվում է սահմանափակ ռեսուրս, ֆիքսված ծառայությունների համար այն սահմանափակ չի համարվում և կարող է օգտագործվել բազմաթիվ ֆիզիկական և իրավաբանական անձանց

(այդ թվում՝ կառավարական օգտագործողների) կողմից՝ կախված ծառայության աշխարհագրական վայրից և տեխնիկական պարամետրերից:

Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովն իր տնօրինման ներքո գտնվող ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը պլանավորելու, համակարգելու և արդյունավետ ու նպատակային կազմակերպելու օրենքով վերապահված գործառույթների շրջանակներում Հանձնաժողովի 10.09.2008 №487Ն որոշմամբ հաստատված ցանկով ապահովել է, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներին և միջազգային պրակտիկային համապատասխան՝ ցանկում ներառված ռադիոհաճախականության ռեսուրսի նպատակային օգտագործման՝ այլ ծառայությունների նկատմամբ գերակայությունը:

Պետք է նշել նաև, որ հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող կամ իրականացման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մասնագիտական հանրությունը առնվազն պետք է տեղյակ լինի ռադիոհաճախականությունների օգտագործման միջազգային փորձին և զարգացումներին, ինչպես նաև այդ կապակցությամբ Հանձնաժողովի գործունեության ծրագրերին և հետևաբար, Հանձնաժողովի 10.09.2008թ. №487Ն որոշմամբ հաստատված ցանկում 800ՄՀց ռադիոհաճախականությունների համապատասխան հատվածները ներառված չլինելը, թե իրավական և թե մասնագիտական տեսանկյունից, որևէ կերպ չի կարող դիտարկվել որպես նախատեսվող մրցույթին այլ տնտեսվարող սուբյեկտների մասնակցության սահմանափակում:

Միննույն ժամանակ, 800ՄՀց և 1800ՄՀց տիրույթներում ռադիոհաճախականությունների ազատ հատվածները շարժական կապի ծառայությունների շուկայում գործող երեք օպերատորների մասնակցությամբ կազմակերպվող փուլային մրցույթների միջոցով տրամադրելու և չորրորդ օպերատորի մուտքը շուկա աննպատակահարմար համարելու վերաբերյալ հարկ է նշել հետևյալը՝

հաշվի առնելով Հայաստանի հետ աշխարհագրական չափերով և բնակչության թվաքանակով համադրելի երկրների փորձը, որտեղ առավելապես գործում են շարժական կապի 3 օպերատորներ (այն եզակի դեպքերում, որտեղ առկա է 4-րդ օպերատորը, վերջինիս մասնաբաժինը գրեթե աննշան է), Հայաստանի Հանրապետությունը դեռևս 2008 թվականից որդեգրել է 3 օպերատորի առկայությամբ շարժական կապի շուկայի կառուցվածք, որին համապատասխան էլ բաշխվել է ռադիոհաճախականությունների տիրույթը և ձևավորվել են իրավական կարգավորումները:

Պետք է նկատի ունենալ, որ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային կարգավորումների համաձայն՝ նոր օպերատորի մուտքը շարժական կապի շուկա

իրականացվում է բացառապես մրցութային եղանակով՝ այդ նպատակով ռադիոհաճախականությունների անհրաժեշտ ռեսուրսի առկայության պարագայում: Ընդ որում, ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների շուկա նոր օպերատորի մուտքի ցանկացած մրցութային գործընթացի իրականացմանը նախորդել է ՀՀ կառավարության համապատասխան որոշում (ինչպես օրինակ, շարժական կապի շուկա 2-րդ և 3-րդ օպերատորների մուտքի կամ 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման դեպքում):

Հետևաբար, այս առումով, Հանձնաժողովի կողմից շարժական բջջային կապի ցանցի և ծառայությունների մատուցման լիցենզիայի ու համապատասխան ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման մրցութային գործընթացի կազմակերպման ու իրականացման (այդ թվում՝ մրցութային կանոնների սահմանումը) հարցերը հնարավոր է դիտարկել միայն ՀՀ կառավարության՝ շարժական կապի շուկա նոր օպերատորի մուտքի նպատակահարմարության վերաբերյալ հեռահաղորդակցության ոլորտի քաղաքականության առկայության և անհրաժեշտ ռադիոհաճախականությունները առևտրային նպատակով տրամադրելու համար դրանց առկայության պարագայում:

Հանձնաժողովի կողմից 800ՄՀց և 1800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում որոշակի հատվածների տրամադրման մրցույթի կազմակերպման տեսլականը հիմնված է եղել ՀՀ շարժական կապի ոլորտում առավելագույնս տեխնոլոգիական առաջընթաց և այդ տեխնոլոգիաների համընդհանուր հասանելիություն ապահովելու սկզբունքների վրա: Սա նշանակում է, որ 3 օպերատորի մասնակցությամբ ձևավորված շարժական կապի շուկայի մրցակցության բարձր մակարդակի և հնարավոր 4-րդ օպերատորի կողմից 2G, 3G, 4G և 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիաներով մրցակիցներին համարժեք ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ռադիոհաճախականային ռեսուրսի բացակայության պայմաններում Հանձնաժողովը պետք է ընտրություն կատարեր հետևյալ երկու նպատակների միջև՝

- առկա ռադիոհաճախականության ռեսուրսը նպատակաուղղել 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ցանցերի զարգացման և դրանց միջև մրցակցության ու համընդհանուր հասանելիության ապահովմանը, կամ՝

- բացառել վերոնշյալ նպատակը և մրցակիցներին տեխնոլոգիապես զիջող ցանցով և ծառայություններով (ներկայումս «ՄՏՍ Հայաստան» և «Յուբոմ» ՓԲԸ-երը 4G+ (LTE Advanced) ծառայությունները մատուցում են 800ՄՀց, 1800 ՄՀց և 2600 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներից համապատասխանաբար 20

ՄՀց. 40 ՄՀց և 40ՄՀց հատվածների օգտագործմամբ) նոր՝ 4-րդ օպերատորի մուտք ապահովել շարժական կապի շուկա: Նոր, ոչ լիարժեք օպերատորի առկայությունը, տեխնոլոգիապես ոչ մրցունակ հնարավորություններով, կպարունակեր վերջինիս կողմից բաժանորդներ ներգրավելու և շուկայում մրցունակ դիրք գրավելու դեմպինգի հնարավոր կիրառման, կամ հակամրցակցային այլ դրսևորման ռիսկեր, որոնք էլ իրենց հերթին կբերեին շարժական կապի շուկայում առկա մրցակցության անդառնալի աղավաղմանը:

Արդյունքում Հանձնաժողովը, նախապատվություն տալով առկա ռադիոհաճախականության ռեսուրսը 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ցանցերի զարգացման և դրանց միջև մրցակցության ու համընդհանուր հասանելիության ապահովմանն ուղղելու նպատակին, այն ներկայացրել է ՀՀ վարչապետին, ՀՀ առաջին փոխվարչապետի մոտ քննարկել շահագրգիռ պետական մարմինների մասնակցությամբ, համապատասխան մրցութային փաթեթը համաձայնեցրել է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ, **ինչն էլ ի վերջո իրավական հիմք է ստացել վերը նկարագրված հիմնավորումների և գործընթացների արդյունքում ընդունված՝ վերոնշյալ մրցույթների կազմակերպմանն ու իրականացմանը վերաբերող Հանձնաժողովի համապատասխան որոշումներով:** Մրցութային հանձնաժողովի կազմում ներառված են եղել ՀՀ ԲՏԱ նախարարության և ՀՀ ԱԱԾ ներկայացուցիչները, մրցույթը կազմակերպվել և իրականացվել է հրապարակային և դրա իրականացման արդյունքում տրամադրված թույլտվության պարտավորությունների կատարմամբ ՀՀ 100% բնակավայրերն ապահովվել են շարժական 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթով և 88,2%-ը՝ 2 օպերատորի կապի լայնաշերտ 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի փոխադարձ ներթափանցելի ծածկույթով:

Նշված մոտեցման կիրառմամբ ենթակառուցվածքների զարգացման վերոնշյալ ցուցանիշների ապահովման արդյունքում Հանձնաժողովը Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) կողմից համարվել է ԱՊՀ տարածաշրջանում լավագույն թիրախային կարգավորում իրականացնող մարմին:

Ամփոփելով, գտնում ենք, որ 811-821ՄՀց/852-862ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները Հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 10-ի N°487Լ որոշմամբ հաստատված՝ մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրվող ռադիոհաճախականությունների ցանկում չներառելով, որևէ կերպ չի սահմանափակվել այլ տնտեսվարողների մասնակցությունը տվյալ մրցույթին՝ առնվազն

նադիոհաճախականությունների տվյալ հատվածների ազատականացման գործընթացի հրապարակայնության ապահովման, հեռահաղորդակցության ոլորտի տեխնոլոգիական զարգացման միջազգային միտումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետով Հանձնաժողովին վերապահված լիազորության իրացման գործոնների առկայության համատեքստում:

Հանձնաժողովը կարգավորում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները

- Արձանագրությամբ նշվել է, որ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների կարգավորումը ապահովելու համար ուսումնասիրվել է կանոնադրական բոլոր գործառույթները, սակայն 4 կետերում արձանագրվել են **թերություններ**:

Մինչդեռ, որպես «թերություն» նշված՝ «ժգ. Կիրարկում է կանոններ և կանոնակարգեր, ուսումնասիրում և վերահսկողության ենթարկում կարգավորման ենթակա անձանց գործունեությունը» ենթաբաժնում նկարագրված է միայն Հանձնաժողովի՝ տվյալ գործառույթի իրականացմանն ուղղված միջոցառումներն ու գործողությունները, որոնք Հանձնաժողովի կողմից հաշվեքննության ընթացքում ներկայացվել էին, և դրանց առնչությամբ **որևէ «թերություն» արձանագրված չէ**:

- Արձանագրությամբ նշվել է, որ «սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով **չեն իրականացվել** ստուգումներ և աուդիտ օրենսդրության, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով»:

Այս առումով, պետք է նշել, որ Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 9-ի №299Ա որոշման համաձայն՝ «ՎԵՈՆ Արմենիա» («Տելեկոմ Արմենիա»), «ՄՏՍ Հայաստան» և «Յուրոմ» ՓԲԸ-ները մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված անկախ աուդիտորական կազմակերպության համապատասխան եզրակացությամբ ներկայացրել են իրենց հանրային շարժական կապի ցանցերի SS7 համակարգերի հուսալիության և պաշտպանվածության ապահովման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ խոցելիության տեսակների: Միննույն ժամանակ, հաշվի առնելով հանրային շարժական կապի ցանցերի SS7 համակարգերի պաշտպանվածության աուդիտի արդյունքներով բացահայտված խոցելիությունները՝ օպերատորները պարբերաբար

Հանձնաժողով են ներկայացնում դրանց վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկավորություն: Ընդ որում, նշված աուդիտի իրականացման պահանջը սահմանվել է, ազգային անվտանգության ոլորտում իրավասու մարմնի կողմից բարձրացրած հարցի լուծման շրջանակում: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ ՀՀ ԱԺ կողմից ընդունվել և 2021 թվականի դեկտեմբերի 1-ին ուժի մեջ է մտել Հանձնաժողովի մշակած՝ կարգավորող մարմնի անկախության, կարգավորման գործընթացների արդյունավետության և թափանցիկության բարձրացմանն ուղղված օրենսդրական փաթեթը (որի վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատը տեղեկացվել էր Հանձնաժողովի 27.07.2021թ. NԳԲ/34.3-Մ2-3/2522-2021 գրությամբ), որի համաձայն՝ կարգավորման գործընթացների պահանջներից բխող նպատակային այն ծախսերը, որոնք նշված օրենքների ընդունումից առաջ գործող իրավակարգավորումներով Հանձնաժողովի սահմանած պահանջներով իրականացնում էին լիցենզավորված անձինք (օրինակ, տեխնիկական աուդիտ)՝ հնարավորություն կունենա այսուհետ իրականացնելու Հանձնաժողովը:

- Արձանագրությամբ նշված է, որ Հանձնաժողովը «իրավասու մարմնին առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ» գործառույթը չի իրականացրել:

Այս կապակցությամբ, ինչպես ի պատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի 21.07.2021թ. NՀՊԵ-379 գրության Հանձնաժողովի 27.07.2021թ. NԳԲ/34.3-Մ2-3/2522-2021 գրությամբ արդեն իսկ նշվել էր՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով հեռահաղորդակցության բնագավառի կարգավորմանը վերաբերող Հանձնաժողովի գործառույթները, որպես «ex ante» (նախքան փաստերի տեղի ունենալը) կարգավորում իրականացնող մարմին՝ կարգավորման առանձնահատկությամբ պայմանավորված Հանձնաժողովն իրականացնում է ըստ անհրաժեշտության՝ վերլուծելով հեռահաղորդակցության ոլորտի ընթացիկ իրավիճակն ու գնահատելով զարգացման միտումները: Ուստի, այդ համատեքստում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահված գործառույթներն՝ ըստ իրենց բնույթի իրականացվում են ինչպես մեկանգամյա սկզբունքով, այնպես էլ պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության: Այդուհանդերձ, պետք է նշել, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետով Հանձնաժողովին վերապահված գործառույթի իրականացումը բխում է նույն օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ կետով իրավասու մարմնին վերապահված գործառույթից (խորհրդակցելով Կարգավորողի հետ՝ մշակել ստանդարտներ (ներառյալ՝ ռադիոհաճախականությունների տարածումները և ցանցային

համատեղելիությունը)..): Այսինքն, Հանձնաժողովն իրավասու մարմինն առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ վերջինիս կողմից համապատասխան ստանդարտներ մշակելու գործընթացի ընթացքում կամ այդ ստանդարտներն իրավասու մարմնի կողմից սահմանելուց հետո՝ դրանից բխող կարգավորումների սահմանման անհրաժեշտությունից: Ընդ որում, **ռադիոհաճախականությունների տարածումներին և ցանցային համատեղելիությանը վերաբերող ստանդարտներն արդեն իսկ սահմանված են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N1925Ն որոշմամբ և այդ մասով լրացուցիչ ստանդարտներ սահմանելու կամ համապատասխան առաջարկ ներկայացնելու անհրաժեշտություն չկա:** Այդուհանդերձ, Հանձնաժողովին վերապահված նշված գործառույթի շրջանակում **Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 18-ի N30Ն որոշմամբ հաստատվել են Հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի և տեխնիկական նկարագրում ընդգրկվող տեղեկությունների ցանկերը**, որոնցով սահմանվում են նաև վերոնշյալ տեխնիկական նախագծերում և նկարագրերում ընդգրկվող փաստաթղթերում ներառվող տեխնիկական բնութագրերի և տեղեկությունների պահանջները: Ընդ որում, նշված իրավական կարգավորման նպատակներից է, աջակցել իրավասու մարմնին վերջինիս կողմից «էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով վերապահված գործառույթների իրականացման հարցում: Բացի այդ, **Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 7-ի N234Ն որոշմամբ սահմանվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ինտերնետ հասանելիության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց ներկայացվող պահանջները**, որի նպատակն է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց համար սահմանել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցելու ընթացքում պաշտպանված ինտերնետ կապ ապահովելու պահանջներ (այդ թվում՝ անվտանգային տեխնիկական պահանջներ՝ «ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում» (ԴՈՍ/ԴԴՈՍ (DOS/DDOS) հարձակումներից պաշտպանված ինտերնետ կապ): Ընդ որում, որոշմամբ սահմանված է, որ նշված պահանջի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովի կողմից հավաքագրվում է և փոխօգնության կարգով տրամադրվում է իրավասու մարմնին: **Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N578Ն որոշմամբ սահմանվել են ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ-ի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու**

դեպքում ու ռազմական դրության պայմաններում հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի օպերատորների կողմից ազդարարման և իրազեկման պահանջներն ու դրանց իրականացման սկզբունքները, որոնք ներառում են նաև տեխնիկական պահանջներ: Միաժամանակ, Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի N354Ն որոշմամբ սահմանվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերով բացառապես պատվիրված կարճ հաղորդագրությունների ուղարկման ապահովմանն ուղղված պահանջները, որի նպատակն է աջակցել իրավասու մարմնին վերջինիս կողմից «էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով վերապահված գործառույթների իրականացման հարցում և որոշմամբ սահմանված պահանջները ներառում են նաև տեղեկատվության անվտանգության ISO/IEC27001 միջազգային ստանդարտի հավաստագրի առկայության վերաբերյալ պահանջ: Ամփոփելով, նշենք, որ վերըթվարկված կարգավորումներն ու համապատասխան իրավական ակտերը ներառում են էլեկտրոնային հաղորդակցության համապատասխան տեխնիկական պահանջներ (ստանդարտներ), որոնք նախապես քննարկվել են ոլորտի իրավասու մարմնի հետ, ուստի փաստում ենք, որ «էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետով Հանձնաժողովին վերապահված գործառույթն իրականացվում է պատշաճ, նպատակային և ըստ անհրաժեշտության:

Բացատրություններ

Հայաստանի Հանրապետության 2019-2020 թվականների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության մասով

Ընդունվել է ի գիտություն: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություններում արդյունքի չափորոշիչները սահմանելիս հաշվի կառնվեն Արձանագրությամբ ներկայացված առաջարկները:

Հանձնաժողովի կողմից 2019 և 2020 թվականներին տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների վերաբերյալ

- Արձանագրությամբ նշվում է, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածում նշված «Հ» տառով սահմանված պահանջներն իրականացվել են

մասնակի և 2019-2020 թվականներին ա/ձ Կարեն Աբրամյանի կողմից ներկայացված հաշվետվությունում բացակայում են եռամսյակային որոշ հաշվետվությունները:

Այս կապակցությամբ նշենք, որ ա/ձ Կարեն Աբրահամյանին հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիան տրամադրվել է 17.04.2019թ.-ին: 2019 թվականի համար ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ վերջինս գործունեություն չի իրականացրել, իսկ 2020 թվականի 1-4-րդ եռամսյակի համար հաշվետվություններ չներկայացնելը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով և վերջինիս կողմից պատերազմի առաջնագծում գտնվելու հանգամանքով, որի վերաբերյալ ա/ձ Կարեն Աբրամյանը տեղեկացրել է աշխատանքային կարգով: Ընդ որում, նշված գործոններով պայմանավորված՝ տվյալ ժամանակահատվածում վերջինս նույնպես գործունեություն չի իրականացրել, և 2021 թվականի համար արդեն իսկ ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ սկսել է մատուցել ծառայություններ 2021 թվականի 3-րդ եռամսյակից:

Սակագների սահմանման վերաբերյալ

1. Ջերմային էներգիայի սակագների հաշվարկման վերաբերյալ

«ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ի գործունեության առնչությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարությունը սպառողների համար մատչելի սակագնով ջերմամատակարարման վերականգնման անհրաժեշտությունից ելնելով և էլեկտրական ու ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման համակարգերի վերականգնման տեխնիկատնտեսական ցուցանիշների ազդեցությունն էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքային ռեժիմների վրա փորձարկելու նպատակով իր 2006 թվականի ապրիլի 13-ի №509Ն որոշմամբ առաջարկել էր Հանձնաժողովին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա տրամադրել Երևանի Ավան և Դավթաշեն թաղային համայնքներում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման առաջնեկային համակարգերի կառուցման համար, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ բազմաբնակարան շենքերի սպառողներին ջերմամատակարարման ծառայություն իրականացնելու լիցենզիա

ստացած անձանց համար պարտադիր պայման սահմանել ջերմամատակարարման իրականացումը՝ տալով նրանց էլեկտրաէներգիա գնելու 5 տարվա երաշխիք: Վերը նշված ծրագրի շրջանակում Հանձնաժողովը «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ին տրամադրել է համապատասխան լիցենզիաներ՝ Երևանի Ավան վարչական շրջանում էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման առաջնեկային համակարգեր կառուցելու և շահագործելու համար՝ միաժամանակ տալով «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կայանից առաքվող էլեկտրաէներգիայի գնման 5 տարվա երաշխիք և այդ ժամանակ գործող կարգավորումների հիման վրա սահմանելով համեմատաբար բարձր սակագին էլեկտրաէներգիայի համար: Մասնավորապես, Հանձնաժողովի 21.12.2011թ. №600Ա որոշմամբ (փոփոխված 26.06.2013թ. №222Ա և 30.04.2014թ. №114Ա որոշումներով) «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ին տրամադրել է ջերմային էներգիայի բաշխման լիցենզիա, ինչպես նաև 25.11.2015թ. №388Ն որոշմամբ սահմանել է «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից նշված թաղամասերի սպառողներին ջեռուցման նպատակով վաճառվող ջերմային էներգիայի և տաք ջրի մատակարարման սակագները:

«ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող նախագծով ի սկզբանե նախատեսված է եղել կենտրոնացված ջերմամատակարարմամբ ապահովել Ավան վարչական շրջանի 6 թաղամասերի թվով 76 բազմաբնակարան շենքերի 3350 բնակարան, որից, ըստ գնահատականների, հնարավոր էր որպես բաժանորդ ներգրավել 85%-ին: Մինչդեռ, «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ն կենտրոնացված ջերմամատակարարմամբ չի կարողացել ապահովել համապատասխան թվով բազմաբնակարան շենքերի, որի արդյունքում 2021 թվականի 3-րդ եռամսյակի դրությամբ ընկերության ջերմամատակարարման ծառայություններից օգտվում է ընդամենը 523 բաժանորդ: Այսպիսով, «ՀայԲուսկոգեներացիա» ՓԲԸ-ն բավարար մակարդակով չի ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի №509Ն որոշմամբ նախատեսված ծրագրի առաջնային նպատակը, այն է՝ Ավան վարչական շրջանի համապատասխան թաղամասերում կենտրոնացված ջերմամատակարարումը, որը պետք է ապահովեր ընկերության հասույթի հիմնական մասը: Վերջինիս միջոցով չփոխհատուցվող հասույթի մնացած մասը պետք է փոխհատուցվեր էլեկտրական էներգիայի վաճառքից ձևավորվող գումարներով՝ միաժամանակ զգալի բեռ առաջացնելով էլեկտրական էներգիայի սպառողների համար:

Նման պարագայում Հանձնաժողովի կողմից հիմնավորված չէր լինի «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ի էլեկտրական և ջերմային էներգիաների սակագների հաշվարկներում կայանում տեղակայված փաստացի հզորությանը համապատասխան ջերմային էներգիայի առաքում նախատեսելու փոխարեն հիմք ընդունել ընկերության թերացումների արդյունքում ստեղծված փաստացի իրավիճակը: Ընդ որում, սակագների հաշվարկներում ներառվող առաքվող ջերմային էներգիայի մեծությունը ազդեցություն ունի ոչ թե ջերմային էներգիայի սակագների վրա, այլ կարող է տեղիք տալ ընկերության կողմից էլեկտրական էներգիայի սակագների բարձրացման վեճի խորացմանը: Մասնավորապես, «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից ջերմամատակարարման սակագները ձևավորվել են անհատական ջեռուցման համակարգերի համեմատ մրցունակ սակագին ունենալու սկզբունքի հիման վրա, ինչի պարագայում փաստացի իրավիճակով պայմանավորված ջերմային էներգիայի քանակները հաշվի առնելու դեպքում կմեծանար էլեկտրական էներգիայի սակագների հաշվին անհրաժեշտ հասույթի մնացած մասի փոխհատուցման անհրաժեշտությունը:

2. Բնական գազի սակագնի և հիմնական ցուցանիշների հաշվարկման վերաբերյալ

Արձանագրության 33-րդ էջում, 3-րդ պարբերության մեջ առկա՝ **«Պարզվեց նաև, որ նույն նպատակով, իր՝ «Երևան ԶԷԿ» ՓԲԸ-ի ներկրած 150 մլն խմ ծավալը, Տեղեկանքում գրանցված է «փոխադրված գազի ծավալներ բաժնի» «այլ սպառողներ» մասում: Ստացվում է, որ նույն բնույթի տվյալները տեղադրված են տարբեր բաժիններում, ինչը շփոթություն է առաջացնում:»** ձևակերպման առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվող՝ գազամատակարարման համակարգի հիմնական ցուցանիշներում (նույն ցուցանիշներն արտացոլված են Արձանագրության 31-32 էջերում՝ աղյուսակի տեսքով) «6.1 Այլ սպառողներ» տողի ներքո նշված են «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ին վերաբերող գործարքների մասով Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրված, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված գաղտնի պայմանագրերի շրջանակում մատակարարված գազի ծավալները:

Քանի որ մատակարարված բնական գազի ծավալների հաշվառման համար «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ում տեղադրված է ընդամենը մեկ հաշվառքի սարք, ինչի պարագայում

հնարավոր չէ փարանջափել փարբեր աղբյուրներից մատակարարվող բնական գազի ծավալները, ընկերությանը մատակարարված բնական գազի ընդհանուր ծավալից Իրանի Իսլամական Հանրապետությունից ներկրված բնական գազի ծավալի բաղադրիչն, ըստ էության, առանձնացված է ըստ պայմանագրային մեծությունների:

Հերևաբար, հարցի առնչությամբ Արձանագրության դիտարկումն ընդունելի է, և այսուհետև Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվող գազամատակարարման համակարգի հիմնական ցուցանիշներում, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում տեղադրված հաշվառքի սարքի արձանագրած ընդհանուր ցուցանիշը (մատակարարման ծավալը) կարտացոլվի նույն աղյուսակի «10.2 Էներգետիկա» տողում՝ նշելով, որ այն «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից բնական գազի ընդհանուր սպառումն է (ԻԻՀ-ից և ՌԴ-ից մատակարարված գազի ծավալների հանրագումարով), ինչի արդյունքում կվերանա Արձանագրությամբ նշված «շփոթությունը»:

Միաժամանակ, Արձանագրությամբ նշված՝ սույն դիտարկման մասով անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հանձնաժողովի պաշտոնական կայքում գազամատակարարման համակարգի հիմնական ցուցանիշների հրապարակումը նպատակ ունի հանրությանն իրազեկել Հայաստանի Հանրապետության բնական գազի հաշվեկշռի (ներկրում, սեփական կարիքներ, կորուստներ, փոխադրում, բաշխում) առանձին փարբերի վերաբերյալ, ինչը կրում է տեղեկատվական բնույթ և որևէ ձևով չի հանդիսանում սակագների հաշվարկման համար ելակետային կամ հաշվարկային ցուցանիշներ:

Հանձնաժողովը կարգավորում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները

- Արձանագրությամբ նշվում է, որ «Հանձնաժողովը չի իրականացրել՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ կանոններ և կարգեր հաստատելու գործառույթը»:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հանձնաժողովի կողմից օրենքի նախկին խմբագրությամբ սահմանված՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ կանոնի (կարգի) հաստատման մասին հիշյալ դրույթը (կանոնի (կարգի) հաստատումն) իրավական առումով խնդրահարույց էր, ինչից ելնելով, չնայած ֆորմալ առումով՝ Հանձնաժողովի իրավասության առկայությանը, վերջինս ձեռնպահ է մնացել դրա հաստատումից: Նման մոտեցման հիմք են հանդիսացել գործող մի շարք իրավակարգավորումներ. մասնավորապես, Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել

պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, իսկ 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Մեջբերված դրույթներից հետևում է, որ բացառապես օրենքներով են սահմանվում անձանց իրավունքների սահմանափակումների, այդ թվում նաև՝ պատասխանատվության կիրառման հարցերը (խնդրո համատեքստում օրենսդրի նույնական մոտեցումը սահմանված է Սահմանադրության՝ նախկինում գործող խմբագրությամբ): Նշվածից ելնելով, այն է՝ սահմանադրական տեսանկյունից խնդրահարույց համարելով պատժամիջոցների կիրառման վերաբերյալ հարցերի մանրամասնումը հանձնաժողովի որոշմամբ՝ վերջինս ձեռնպահ է մնացել դրա ընդունումից, այնուհետև՝ նախաձեռնել օրենսդրական փոփոխությունների գործընթաց և հիշատակված հոդվածի՝ պատժամիջոցների կիրառման վերաբերյալ կանոնների (կարգերի) հաստատման վերաբերյալ դրույթն օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանվել է օրենքից: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հանձնաժողովը պատժամիջոցների կիրառման ընթացակարգային հարցերով մշտապես առաջնորդվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված իրավակարգավորումներով, որի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Հետևաբար, ղեկավարվելով Սահմանադրության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներով և ձեռնպահ մնալով կանոնի (կարգի) ընդունումից՝ Հանձնաժողովն առաջնորդվել է օրենքի իրավակարգավորումներով և որևէ իրավական բաց առկա չի եղել: Միաժամանակ, նախաձեռնելով օրենսդրական փոփոխությունների գործընթաց՝ ՀՕ-368-Ն օրենքով խնդրո առարկա դրույթը հանվել է օրենքից: